ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2021-2022 ուստարվա գործունեության

ՇՊՀ-ի ռեկտոր՝ Ե. Սերոբյան

Գյումրի 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | | |
|---|---|---|---|
| | | **Ներածություն** | **4** |
| **1.** | | **Առաքելություն և նպատակներ** | **6** |
| **2.** | | **Կառավարում և վարչարարություն** | **9** |
| | 2.1 | ՇՊՀ-ի կառուցվածքը, Հոգաբարձուների ու Գիտական խորհուրդների և Ռեկտորատի կազմերը | **9** |
| | 2.2 | ՇՊՀ կառուցվածքային ստորաբաժանումները և կառավարման համակարգը | **18** |
| **3.** | | **Մասնագիտության կրթական ծրագրեր** | **22** |
| **4.** | | **Ուսանողներ** | **29** |
| **5.** | | **Պրոֆեսորադասախոսական կազմ** | **32** |
| **6.** | | **Հետազոտություն և զարգացում** | **41** |
| | 6.1. | Գիտահետազոտական գործունեություն | **41** |
| | 6.2. | ՇՊՀ-ի գիտական տեղեկագիր | **47** |
| | 6.3. | ՊԴ կազմի գիտական գործունեության խրախուսում | **54** |
| | 6.4. | Համալսարանի կողմից ֆինանսավորվող ներբուհական դրամաշնորհային ծրագրեր | **56** |
| | 6.5. | Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհներ | **60** |
| | 6.6. | Մենագրությունների, ուսումնամեթոդական և ատենախոսական աշխատանքների գրախոսման գործընթացի կազմակերպում | **62** |
| **7.** | | **Ենթակառուցվածք և ռեսուրսներ** | **68** |
| | 7.1. | Ուսումնական, ուսումնագիտական և այլ շինությունների նպատակային նշանակություններն ու հասցեները | **68** |
| | 7.2. | Տեխնիկական հագեցվածության ցուցանիշներ | **69** |
| | 7.3. | Գրադարանային պաշարներ | **70** |
| **8.** | | **Հասարակական պատասխանատվություն** | **71** |
| | 8.1. | Հասարակության հետ կապեր և լրատվություն | **71** |
| | 8.2. | Արհեստակցական միության աշխատանքների ընդհանուր ցուցանիշներ | **80** |
| **9.** | | **Արտաքին կապեր և միջազգայնացում** | **82** |
| | 9.1. | Համալսարանի կարողությունների զարգացման ծրագրեր | **82** |
| | 9.2. | Համալսարանի աշխատակազմի և ուսանողական համակազմի | |

| | | | |
|---|---|---|---|
| | | ակադեմիական շարժունության ծրագրեր | **90** |
| | 9.3. | Արտասահմանյան և հայաստանյան համալսարանների ու այլ կազմակերպությունների հետ համագործակցություն | **93** |
| **10.** | | **Որակի ներքին ապահովման համակարգ** | **98** |
| | 10.1. | ՇՊՀ-ի որակի ներքին ապահովման համակարգ | **98** |
| | 10.2. | 2021-2022 ուստարում գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից կազմակերպված՝ որակի ապահովմանն ուղղված հիմնական գործընթացները | **99** |
| | 10.3. | Ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցումներ | **101** |
| **11.** | | **ՇՊՀ-ի քոլեջ և ավագ դպրոց** | **105** |
| | 11.1. | ՇՊՀ-ի քոլեջ | **105** |
| | 11.2. | ՇՊՀ-ի ավագ դպրոց | **106** |
| **12.** | | **Ֆինանսական հաշվետվություն** | **108** |

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հյուսիսային տարածաշրջանի՝ Շիրակի մայր բուհը՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանը (նախկինում՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ), իր հիմնադրման առաջին իսկ տարվանից՝ 1934թ.-ից ստանձնելով ՀՀ բարձրագույն կրթության միասնական քաղաքականության իրականացման և գիտակրթական, նորարարական բուհ դառնալու պարտավորությունը, մեծ պատասխանատվությամբ է իրականացնում իր առաքելությունը: Մասնավորապես, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանը, հավատարիմ մնալով բարձրագույն կրթության արդյունավետ իրականացման իր առաջնային հանձնառությանը, վերանայելով կառավարման և կրթության կազմակերպման գործընթացները, հաշվետու ուստարում ապահովել է նախատեսված գործողությունների հնարավորինս ամբողջական իրականացումը: Սույն հաշվետվությունում ներկայացված են ՇՊՀ-ի՝ 2021-2022 ուսումնական տարվա գործունեության արդյունքները՝ ըստ համալսարանի առանցքային գործառույթների: Բուհը հաշվետու շրջանում շարունակել է գործառնել որպես հավատարմագրված համալսարան՝ իր գործունեության տիրույթում պահելով վերահաս մարտահրավերներն ընդունելու, իրավիճակները կառավարելու և հաղթահարելու, ուսումնական գործընթացները կանոնակարգելու և ուսանողակենտրոն միջավայր ունենալու ռազմավարությունը: 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ՇՊՀ-ն հետևողականորեն շարունակել է իր գործունեությունը մրցունակ մասնագետների պատրաստման, ՄԿԾ-երի բարելավման, համալսարանի միջազգայնացման և կարողությունների զարգացման, կրթական ծառայությունների բազմազանեցման, բուհի կառավարման գործընթացների կանոնակարգման, ֆինանսական կայունության ապահովման և այլ ուղղություններով: Առաջնորդվելով ՊԻԳԲ Դեմինգի շրջափուլով՝ բուհի շարունակական, կայուն զարգացման երաշխիքներից է համարվում կրթության որակի հետևողական բարձրացումը, ինչին էլ նպատակաուղղված է ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչների պատշաճ կազմակերպումն ու իրականացումը: Ուսումնական գործընթացը բուհում զուգորդվում է գիտական, մշակութային, մարզական բազմաթիվ իրադարձություններով: Հաշվետու շրջանում համալսարանը,

կրթական ծառայությունների մատուցման գործընթացում կրթության որակի ապահովումը գերակա համարելով, առաջնորդվել է գործունեության թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, հասանելիության սկզբունքների շարունակականության ապահովմամբ: Ըստ գործունեության տարբեր ոլորտների՝ իրականացվել են մի շարք աշխատանքներ, որոնք բխում են շահակիցների կարիքներից, համահունչ են համալսարանի առաքելությանը, միտված են բուհի ռազմավարական գերակայություններին և ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացմանը:

Համալսարանի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության և ՇՊՀ-ի կանոնադրության համապատասխան դրույթներով՝ հիմնված ինքնավարության, միանձնյա և կոլեգիալ կառավարման համակցման, ինչպես նաև կարևորագույն հարցերի լուծման համար համալսարանի հանրույթի մասնակցության ապահովմամբ: ՇՊՀ-ի կառավարման մարմիններն են՝ ՀԽ-ն, ԳԽ-ն, Ռեկտորը, ինչպես նաև Ռեկտորատը՝ որպես խորհրդակցական մարմին:

Հաշվետու ժամանակահատվածի երկրորդ կեսին «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի տեղակալման նպատակով անցկացվել է մրցույթ: ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհուրդը 2022 թ. փետրվարի 19-ին կայացած նիստում փակ գաղտնի քվեարկությամբ Երվանդ Սերյոժի Սերոբյանին ընտրել է «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր: Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատվել են ՀՀ Կառավարության՝ 2022 թվականի մարտի 17-ի N314-Ա որոշմամբ:

2021-2022 ուսումնական տարվա գործունեության տարեկան հաշվետվությունը կազմելիս առաջնորդվել ենք ՈԱԱԿ-ի սահմանած տասը չափանիշներով:

Հաշվետվության կառուցվածքային յուրաքանչյուր բաժնում ներկայացված են հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործողությունները, դրանց վերջնարդյունքները, առաջարկություններ և դիտողություններ կատարվածի վերաբերյալ: Բաժիններում ներկայացված քանակական տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակներով և գծապատկերներով:

# 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Շիրակի պետական համալսարանի՝ որպես իրավահաջորդի առաքելությունը և նպատակները բխում են Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Զարգացման ռազմավարական ծրագրից https://shsu.am/media/pdf/gspi-razmavarakan-cragir.pdf

## ՇՊՀ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Շիրակի պետական համալսարանը կրթական, գիտական և մշակութային հաստատություն է, որի առաքելությունն ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետների պատրաստումն է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով՝ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման միջոցով:

Դառնալ ապագայի հայկական համալսարան՝ հիմնված գիտական, կրթական, տնտեսական, մշակութային ու սոցիալական գործընթացների միասնական սկզբունքների, հայրենասիրական ու հումանիստական համընդգրկուն արժեքների վրա: Համալսարան, որը ծառայելու է տարածաշրջանի (Շիրակի մարզ, Ջավախքի հայ համայնքներ, իսկ առանձին մասնագիտությունների դեպքում՝ նաև Սփյուռք) գիտակրթական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումներին՝ ապահովելով համապատասխան մասնագետների որակյալ պատրաստումը՝ գիտության և կրթության զարգացման միջազգային չափանիշներին և ՀՀ գիտակրթական քաղաքականությանը ներդաշնակ՝ աջակցելով արտաքին ու ներքին շահառուների համապատասխան կարիքների բավարարմանը:

ՇՊՀ-ի գործունեությունը միտված է իր առաքելությունից բխող հետևյալ նպատակներին.

1. ձևավորել ուսանողակենտրոն միջավայր, որակի և սովորելու մշակույթ՝ մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) մրցունակության ու որակավորումների համադրելիության ապահովման, արտաքին հարափոփոխ միջավայրի մարտահրավերներին դիմակայելու համար,
2. ձևավորել մշակույթ՝ գիտահետազոտական աշխատանքների

իրականացման, շրջանավարտներին աշխատանքային կարիերային նախապատրաստելու և գիտելիքահենք հասարակությանն ինտեգրելու համար,

3. ձևավորել արտաքին և ներքին շահակիցների հետ մասնակցային համագործակցության և հաշվետվողականության մշակույթ՝ նպաստելով հասարակությանը մատուցվող կրթական և այլ ծառայությունների թափանցիկությանը:

## ՇՊՀ-Ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

1. Դառնալ աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթական ծառայություններ մատուցող ժամանակակից մրցունակ ուսումնական, գիտահետազոտական ու մարզամշակութային հաստատություն, որը կկարողանա համադրել ինչպես ուսուցման ավանդական մեթոդների վերանայված ու լրամշակված տարբերակները, այնպես էլ ժամանակակից կրթական տեխնոլոգիաների, դասավանդման մեթոդիկաների, նորաստեղծության (իննովացիոն) հնարավորությունները՝ կիրառելով ու շարունակաբար զարգացնելով կրթության ու դաստիարակության արդիական մեթոդները:

2. Դառնալ «սովորող կազմակերպություն», որի գործունեության բոլոր ոլորտներում կարևորվում է հարատև սովորելու միջավայրի առկայության և որակի մշակույթի ձևավորման ու շարունակական զարգացման անհրաժեշտությունը:

3. Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի գիտակրթական, մարզամշակութային և սոցիալ-տնտեսական ոլորտներում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում տարածքային ու տեղական ինքնակառավարման կառույցների հետ սոցիալական գործընկերության միջոցով դառնալ յուրատեսակ «համայնքային կենտրոն»:

4. Դառնալ հաստատություն, որի գործունեությունը միտված է եվրոպական կրթական համակարգին ինտեգրմանը և գիտակրթական համակարգի միջազգայնացմանը:

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը գործում է ՀՀ Կառավարության՝ 2016 թ.-ի սեպտեմբերի 22-ի N 1031-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված կանոնադրությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. 27-րդ կետը վերաշարադրվել է այսպես.

ՇՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմից Հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումները: ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից առաջադրված թեկնածուներն ընտրվում են ՇՊՀ-ի Գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմնին: Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների թվի 25 տոկոսը:

*Փոփ. 08.09.2021թ. ՀՀ կառավարության թիվ 1448-Ն որոշմամբ*

2. 27.1, 27.2, 27.3 և 27.4 կետերը ճանաչվել են ուժը կորցրած:

3. 29-րդ կետում «55 տոկոսը» բառերը փոխարինվել են «25 տոկոսը» բառերով:

*Փոփ. 08.09.2021թ. ՀՀ կառավարության թիվ 1448-Ն որոշմամբ*

4. 30-րդ կետում «10 տոկոսը» բառերը փոխարինվել են «25 տոկոսը» բառերով:

*Փոփ. 08.09.2021թ. ՀՀ կառավարության թիվ 1448-Ն որոշմամբ*

Կրթության որակի բարելավումը և աշխատանքների արդյունավետության բարձրացումը բոլոր ուղղություններով համարելով համալսարանի գործունեության գերակա նպատակը՝ համալսարանում ընթացող բարեփոխումները, բոլոր մասնագիտությունների՝ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով ուսուցմամբ վերանայված ԿԾ-ները միտված են ՀՀ ՈԱՇ-ի համադրելիության ապահովմանը՝ իրենց կառուցվածքային և բովանդակային բնույթով համապատասխանելով Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքներին:

# 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## 2.1 ՇՊՀ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱԶՄԵՐԸ

ՇՊՀ-ի կառուցվածքը (հաստատվել է Հոգաբարձուների խորհրդի՝ 23.04.2018, N 11/1 որոշմամբ)




Ծանոթություն. Ընդհատ գծերով պատկերված կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունն իրականացվում է ինքնածախսածածկմամբ:

ՇՊՀ-ն իր գործունեությունը ծավալում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ՇՊՀ-ի կանոնադրությանը և իրավական այլ ակտերին համապատասխան:

ՇՊՀ-ի կառավարումը հիմնված է ինքնավարության, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, ՇՊՀ-ի ՀԽ-ի, ՇՊՀ-ի ԳԽ-ի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ (հիմք՝ ՇՊՀ-ի կանոնադրություն):

ՇՊՀ-ն իր գործունեությունն իրականացնում է կառավարման մարմինների միջոցով: ՇՊՀ-ի մարմիններն են ՀԽ-ն, Ռեկտորը, ԳԽ-ն, Ռեկտորատը:

## «ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՈՒՄ

| № | ԱՆՈՒՆ - ԱԶԳԱՆՈՒՆ | ՊԱՇՏՈՆ |
|---|---|---|
| 1. | Կարեն Թռչունյան | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ |
| 2. | Նազելի Բաղդասարյան | ՀՀ Շիրակի մարզպետ |
| 3. | Արթուր Շատվորյան | ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ |
| 4. | Արտուր Մովսիսյան | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ |
| 5. | Արթուր Պապիկյան | Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ (համաձայնությամբ) |
| 6. | Բագրատ Ենգիբարյան | «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ) |
| 7. | Լևոն Բարսեղյան | Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ (համաձայնությամբ) |
| 8. | Ջոն Կարապետյան | ՀՀ ԳԱԱ-ի «Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ) |
| 9. | Արմեն Թումասյան | «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի ավագ գիտաշխատող (համաձայնությամբ) |

| | | |
|---|---|---|
| 10. | Ալեքսան Տեր-Մինասյան | «Շիրակ տուրս» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն (համաձայնությամբ) |
| 11. | Լուսինե Գևորգյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Մանկավարժության ֆակուլտետի դոցենտ |
| 12. | Վարդան Մանուկյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ |
| 13. | Աիդա Գարեգինյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դոցենտ |
| 14. | Աշխեն Տոնոյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոս |
| 15. | Անահիտ Վալեսյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ |
| 16. | Լիլիթ Ավետիսյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Մանկավարժության ֆակուլտետի սովորող |
| 17. | Մերի Դավթյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի սովորող |
| 18. | Քրիստինե Առաքելյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սովորող |
| 19. | Գևորգ Ղուկասյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սովորող |
| 20. | Հովիկ Գալոյան | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի սովորող |

## «ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1. | Սերոբյան Երվանդ | Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ |
| 2. | Ավետիսյան Նազելի | Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ |
| 3. | Նիկողոսյան Գագիկ | ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ |
| 4. | Մելքոնյան Հովիկ | Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն |
| 5. | Սարգսյան Արմենուհի | Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն |
| 6. | Խաչատրյան Թերեզա | Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն |
| 7. | Պետրոսյան Կարինե | Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար¤ |
| 8. | Մելիքյան Թամարա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան |
| 9. | Հովհաննիսյան Օֆելյա | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան |
| 10. | Մարդոյան Ռուզաննա | Մանկավարժության ֆակուլտետի դեկան |
| 11. | Մկրտչյան Արթուր | Ռազմական ամբիոնի պետ |
| 12. | Դավինյան Աշոտ | ՇՊՀ քոլեջի տնօրեն |
| 13. | Դարբինյան Կարեն | ՇՊՀ ավագ դպրոցի տնօրենի ԺՊ |
| 14. | Խաչատրյան Վալերի | ՇՊՀ արհմիության նախագահ |
| 15. | Մկոյան Արտաշես | Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր) |
| 16. | Խորիկյան Հովհաննես | Պատմ. գիտ. դոկտոր, (ամենաերիտասարդ դոկտոր) |
| 17. | Սարգսյան Սամվել | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր |
| 18. | Մարտիրոսյան Լևոն | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| 19. | Մկրտչյան Արթուր | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ |

| | | |
|---|---|---|
| 20. | Ղուկասյան Լուսիկ | Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ |
| 21. | Աղանյան Գևորգ | Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ |
| 22. | Գասպարյան Արշավիր | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ |
| 23. | Հովհաննիսյան Արտակ | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ |
| 24. | Սահակյան Կարինե | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ |
| 25. | Հովհաննիսյան Անահիտ | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր |
| 26. | Հայրապետյան Սերգո | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր |
| 27. | Կուրազյան Օֆելյա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ |
| 28. | Տեր-Ադամյան Շուշան | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ |
| 29. | Մաթևոսյան Էվելինա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ |
| 30. | Համբարյան Ժենյա | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի |
| 31. | Հովհաննիսյան Յուլյանա | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Մաթեմատիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի |
| 32. | Գալստյան Ամալյա | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Մաթեմատիկա» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի |

| | | |
|---|---|---|
| 33. | Խաչատրյան Կարեն | Մանկավարժության ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող |
| 34. | Մխիթարյան Լիլիթ | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Թարգմանչական գործ» մասնագիտության (անգլերեն-հայերեն 2-րդ կուրսի ուսանողուհի |
| 35. | Հովհաննիսյան Անժելա | Մանկավարժության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 4-րդ կուրսի (հեռակա¤ ուսանողուհի |
| 36. | Թաղևոսյան Մարգարիտ | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի |
| 37. | Ղազարյան Մերի | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Սոցիոլոգիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի |
| 38. | Գրիգորյան Արուսյակ | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի |
| 39. | Մինասյան Ելենա | Ռազմական ամբիոնի «Նախնական զինվորական պատրաստություն» 2-րդ կուրսի ուսանողուհի |

*2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Գիտական խորհրդի կազմի փոփոխությունների մասին.*

**16.05.2022 թ. ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 66 հրամանով**

1. Դադարեցվել են աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի** «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի ընտրված անդամի լիազորությունները՝ Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:
2. Համաձայն «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 50-րդ կետի՝ **Լևոն Մովսեսի Մարտիրոսյանն** ի պաշտոնե նշանակվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի անդամ:

**06.06.2022 թ. ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 82 հրամանով**

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն»-ի դոցենտ, աշխարհագրական. գիտ. թեկնածու **Գայանե Ռուլեսի Ավետիսյանը**, որպես ընտրված անդամ, ընդգրկվել է ՇՊՀ-ի Գիտական խորհրդի կազմում:

**14.06.2022 թ. ՇՊՀ ռեկտորի թիվ 177 հրամանով**

ՇՊՀ-ի Գիտական խորհրդի կազմում ընտրված ներքոգրյալ սովորողների լիազորությունները դադարեցվել են՝ պայմանավորված բուհն ավարտելու հանգամանքով.

1. **Համբարյան Ժենյա** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի,
2. **Հովհաննիսյան Յուլյանա** - Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Մաթեմատիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի,
3. **Գալստյան Ամալյա** - Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Մաթեմատիկա» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի,
4. **Խաչատրյան Կարեն** – Մանկավարժության ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող,
5. **Թաղևոսյան Մարգարիտ** - Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի,
6. **Գրիգորյան Արուսյակ** - Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Քարտեզագրություն և կատաստրային գործ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի,
7. **Անժելա Հովհաննիսյան** - Մանկավարժության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 4-րդ կուրսի (հեռակա) ուսանողուհի:

**11.08.2022 թ. ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 78 հրամանով**

**Թամարա Հմայակի Մելիքյանն** ազատվել է Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնից, և 2022 թ-ի օգոստոսի 24-ից դադարեցվել են նրա՝ Գիտական խորհրդի և Ռեկտորատի անդամի լիազորությունները:

**11.08.2022 թ.ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 79 հրամանով**

**Ռուզաննա Արամայիսի Մարդոյանն** ազատվել է Մանկավարժության ֆակուլտետի դեկանի պաշտոնից, և 2022 թ-ի օգոստոսի 24-ից դադարեցվել են նրա՝ Գիտական խորհրդի անդամի լիազորությունները:

**12.08.2022 թ.-ի ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 80 հրամանով**

**Օֆելյա Հայկազի Հովհաննիսյանն** ազատվել է Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկանի պաշտոնից, և 2022 թ-ի օգոստոսի 13-ից դադարեցվել են նրա՝ Գիտական խորհրդի անդամի լիազորությունները:

**15.08.2022 թ. ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 82 հրամանով**

**Օֆելյա Հայկազի Հովհաննիսյանը** նշանակվել է Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, և համաձայն «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 50-րդ կետի՝ **Օֆելյա Հայկազի Հովհաննիսյանը** 2022 թ-ի օգոստոսի 24-ից ի պաշտոնե նշանակվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի անդամ:

**29.08.2022 թ. ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 117 հրամանով**

2022 թ.-ի օգոստոսի 30-ից լուծվել է Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ **Էվելինա Ազատի Մաթևոսյանի** հետ 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված թիվ 17 աշխատանքային պայմանագիրը. 2022 թ-ի օգոստոսի 31-ից դադարեցվել են նրա՝ Գիտական խորհրդի անդամի լիազորությունները:

**30.08.2022 թ-ից** դադարեցվել է Օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ **Շուշան Տեր-Աղամյանի**՝ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի ընտրված անդամի լիազորությունները՝ իր դիմումի համաձայն:

**«ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱԶՄԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲՈՒՄ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ | Ե. Սերոբյան |
| 2. | Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝ | Կ. Պետրոսյան |
| 3. | Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ | Գ. Նիկողոսյան |
| 4. | Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ | Ն. Ավետիսյան |
| 5. | Ռեկտորի օգնական | Ս. Շահպարոնյան |
| 6. | Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ՝ | Ռ. Քալաջյան |
| 7. | Արհեստակցական կազմակերպության նախագահ՝ | Վ. Խաչատրյան |
| 8. | Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝ | Ա. Սարգսյան |
| 9. | Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝ | Հ. Մելքոնյան |
| 10. | Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝ | Թ. Խաչատրյան |
| 11. | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան | Լ. Մարտիրոսյան |
| 12. | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ | Թ. Մելիքյան |
| 13. | Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ | Ռ. Մարդոյան |
| 14. | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ | Օֆ. Հովհաննիսյան |
| 15. | Ռազմական ամբիոնի պետ՝ | Ա. Մկրտչյան |
| 16. | Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ՝ | Ա. Հովհաննիսյան |

**11.08.2022 թ. ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 78 հրամանով**

**Թամարա Հմայակի Մելիքյանն** ազատվել է Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնից, և 2022 թ-ի օգոստոսի 24-ից դադարեցվել են նրա՝ Գիտական խորհրդի և Ռեկտորատի անդամի լիազորությունները:

**11.08.2022 թ.ՇՊՀ-ի ռեկտորի թիվ 79 հրամանով**

**Ռուզաննա Արամայիսի Մարդոյանն** ազատվել է Մանկավարժության ֆակուլտետի դեկանի պաշտոնից, և 2022 թ-ի օգոստոսի 24-ից դադարեցվել են նրա՝ Գիտական խորհրդի անդամի լիազորությունները:

## 2.2 «ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների՝ կենտրոնների, ֆակուլտետների, ամբիոնների, Ռազմական ամբիոնի, բաժինների, քոլեջի, ավագ դպրոցի կարգավիճակն ու իրավասությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև ՇՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական այլ ակտերով:

### ՇՊՀ-ի ֆակուլտետները և ամբիոնները

**Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ում գործել են 4 ֆակուլտետ և 14 ամբիոն (Ռազմական ամբիոնն ունի առանձնակի կարգավիճակ)**

| | | |
|---|---|---|
| **1.** | | **ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** |
| | 1. | Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն |
| | 2. | Գործարարության և վարչարարության ամբիոն |
| | 3. | Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն |
| **2.** | | **ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ** |
| | 4. | Հայոց լեզվի և գրականության ամբիոն |
| | 5. | Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն |
| | 6. | Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն |

| | | |
|---|---|---|
| | 7. | Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն |
| | 8. | Արվեստի ամբիոն |
| **3.** | | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ** |
| | 9. | Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն |
| | 10. | Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն |
| | 11. | Պատմության և փիլիսոփայության ամբիոն |
| **4.** | | **ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** |
| | 12. | Մանկավարժության ամբիոն |
| | 13. | Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն |
| **5.** | | **ՌԱԶՄԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ** |

ՇՊՀ-ի կառավարումն իրականացվում է մարդկային և նյութատեխնիկական համապատասխան ռեսուրսներով:

ՇՊՀ-ի կառավարման համակարգը, ՇՊՀ-ի կանոնադրությունը և գործող կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են ընձեռում՝ մասնակցելու որոշումների կայացմանը և տարբեր հարցերի քննարկմանը:

ՊԴ կազմը և ուսանողներն ակտիվ մասնկացություն են ցուցաբերում ՀԽ-ի, ԳԽ-ի, ինչպես նաև ՖԽ-ների նիստերին՝ բարձրացնելով իրենց հուզող հարցերը (հիմք՝ ՀԽ-ի, ԳԽ-ի և ՖԽ-ի նիստերի արձանագրությունները):

Համալսարանի կառավարման, նաև պլանավորման գործընթացում բուհն առաջնորդվում է ուսումնական գործընթացը կանոնակարգող նորմատիվային ակտերով, որոնք ներքին և արտաքին շահառուների համար հստակ և կանխատեսելի են դարձնում կրթական գործընթացը: Իրականացված բարեփոխումների շրջանակներում մշակվել և նախնական քննարկման համար համալսարանի կառավարման իրավասու մարմիններին են ներկայացվել, ապա հաստատվել կանոնադրություններ, կանոնակարգեր, ընթացակարգեր, աշխատակարգեր, որոնք միտված են համալսարանի կառավարման արդյունավետությունը բարձրացնելուն, կրթական և գիտական գործընթացի կառավարման իրավական հիմքերն ուժեղացնելուն:

Պլանավորման բոլոր մակարդակներում գործընթացների կատարման մշտադիտարկումներ են իրականացվում ներքոնշյալ եղանակներով.

1. դասալսումների իրականացում, ընթացիկ ուսումնական և գիտական

գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

2. արտաքին և ներքին շահակիցների շրջանում հարցումների անցկացում և դրանց վերլուծություն (մանրամասն՝ 10-րդ բաժնում),
3. հանդիպումներ ներքին և արտաքին շահակիցների հետ,
4. ամբիոնների, ֆակուլտետների և կենտրոնների ղեկավարների տարեկան հաշվետվություններ և դրանց գնահատում,
5. ռեկտորի հաշվետվություն՝ համալսարանի ուստարվա գործունեության վերաբերյալ:

Մշտադիտարկման արդյունքներն օգտագործվում են գործընթացների իրականացման արդյունավետության բարձրացման և պլանավորման բարելավումների համար:

ՇՊՀ-ն իր գործունեությունն իրականացնելիս հենվում է բուհին առնչվող տեղեկատվության հավաքագրման և վերլուծության վրա: Դա թույլ է տալիս՝ գնահատելու աշխատանքի արդյունավետությունը, պարզելու բացթողումները և բարելավման ուղղությամբ կատարած փոփոխությունների արդյունքները:

ՇՊՀ-ում որոշումների կայացման և իրագործման գործընթացներում զգալի ազդեցություն ունեն արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները, ուստի և ՇՊՀ-ն շարունակական կերպով կատարում է իր գործունեության վրա ազդող առանցքային գործոնների մշտադիտարկում, ուսումնասիրություն և վերլուծություն՝ կանխատեսման, պլանավորման, կազմակերպման և հաշվետվողականության գործառույթների իրականացմամբ՝ նպաստելով համալսարանի կրթագիտական գործունեության կայունացմանը և զարգացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ՇՊՀ-ում տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ: Մասնավորապես՝

**ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդի 23.06.2022 թ. № 9.1 որոշումով**

1. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի Գործարարության և վարչարարության ամբիոնը վերանվանվել է Տնտեսագիտության ամբիոն:
2. լուծարվել են՝

   ա) Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետը և նրա կազմի մեջ մտնող ամբիոնները,

բ) Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետը և նրա կազմի մեջ մտնող ամբիոնները,

գ) Մանկավարժության ֆակուլտետը և նրա կազմի մեջ մտնող ամբիոնները:

3. Հաստատվել է «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի ֆակուլտետների և ամբիոնների ներքոնշյալ կառուցվածքը՝

**Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ**

1. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն
2. Տնտեսագիտության ամբիոն
3. Աշխարհագրության և սերվիսի ամբիոն
4. Կենսաբանության և քիմիայի ամբիոն

**Հումանիտար գիտությունների ֆակուլտետ**

1. Հայոց լեզվի և գրականության ամբիոն
2. Օտար լեզուների և գրականության ամբիոն
3. Պատմության և իրավագիտության ամբիոն

**Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ**

1. Մանկավարժության ամբիոն
2. Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն
3. Սպորտի և արվեստի ամբիոն

**Ռազմական ամբիոն**

# 3.ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՇՊՀ-ի ՄԿԾ-ները բխում են նրա առաքելությունից: Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի ֆակուլտետները և Ռազմական ամբիոնը իրականացրել են բակալավրի առկա 29, հեռակա 24, մագիստրոսի 23 կրթական ծրագրեր, որոնց թողարկման պատասխանատվությունը կրում են մասնագիտական 14 ամբիոնները:

## ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ, ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

| Դասիչ | Մասնագիտություն | Ուսուցման համակարգ | |
|---|---|---|---|
| | | Առկա | Հեռակա |
| **Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն** | | | |
| 011401.05.6 | Մաթեմատիկա | v | |
| 061101.02.6 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | v | |
| 011401.06.6 | Ինֆորմատիկա /տեղեկաբանություն/ | | v |
| 061105.01.6 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | v | v |
| **Գործարարության և վարչարարության ամբիոն** | | | |
| 041301.01.6 | Կառավարում | v | v |
| 041401.01.6 | Շուկայագիտություն | v | |
| 041101.01.6 | Հաշվապահական հաշվառում և հարկում | v | v |
| **Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն** | | | |
| 011401.03.6 | Աշխարհագրություն | v | v |
| 011401.01.6 | Կենսաբանություն | v | v |
| 053101.02.6 | Դեղագործական քիմիա | v | v |
| 054201.02.6 | Քարտեզագրություն և կադաստրային գործ | v | v |
| **Հայոց լեզվի և գրականության ամբիոն** | | | |
| 011401.19.6 | Հայոց լեզու և գրականություն | v | v |
| 032101.01.6 | Լրագրություն | v | v |
| **Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն** | | | |
| 011401.21.6 | Անգլերեն լեզու և գրականություն | v | v |
| 023201.01.6 | Թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն | v | |

| | | | |
|---|---|---|---|
| 023201.01.6 | Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն | v | |
| **Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն** | | | |
| 011401.20.6 | Ռուսաց լեզու և գրականություն | v | v |
| **Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն** | | | |
| | Զբոսաշրջություն | v | |
| 023201.02.6 | Միջմշակութային հաղորդակցություն՝ ֆրանսերեն և հայերեն | v | |
| 101801.01.6 | Սերվիս | v | v |
| **Արվեստի ամբիոն** | | | |
| 021401.01.6 | Դեկորատիվ կիրառական արվեստ | v | |
| 011401.11.6 | Կերպարվեստ | | v |
| 021201.04.6 | Համակարգչային գրաֆիկա | v | |
| **Պատմության և փիլիսոփայության ամբիոն** | | | |
| 011401.18.6 | Պատմություն | v | v |
| **Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն** | | | |
| 042101.01.6 | Իրավագիտություն | | v |
| 031201.01.6 | Քաղաքագիտություն | v | |
| **Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն** | | | |
| 031301.01.6 | Հոգեբանություն | v | v |
| 092301.01.6 | Սոցիալական աշխատանք | v | v |
| 031401.01.6 | Սոցիոլոգիա | v | v |
| **Մանկավարժության ամբիոն** | | | |
| 011301.01.6 | Տարրական մանկավարժություն և մեթոդիկա | v | v |
| 011201.01.6 | Նախադպրոցական մանկավարժ. և մեթոդիկա | | v |
| 011301.03.6 | Սոցիալական մանկավարժություն | | v |
| **Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն** | | | |
| 011401.09. 6 | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | v | v |
| **Ռազմական ամբիոն** | | | |
| 011401.16.6 | Նախնական զինվորական պատրաստություն | v | v |

| Դասիչ | Մասնագիտություն |
|---|---|
| **Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն** | |
| 011401.05.7 | Մաթեմատիկա |
| 011401.04.7 | Ֆիզիկա |
| 061101.02.7 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա |
| **Գործարարության և վարչարարության ամբիոն** | |
| 041301.01.7 | Կառավարում |
| **Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն** | |
| 011401.01.7 | Կենսաբանություն |
| 072101.08.7 | Կենսատեխնոլոգիա |
| 011401.03.7 | Աշխարհագրություն |
| **Հայոց լեզվի և գրականության ամբիոն** | |
| 011401.19.7 | Հայոց լեզու և գրականություն |
| **Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն** | |
| 011401.21.7 | Անգլերեն լեզու և գրականություն |
| **Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն** | |
| 011401.20.7 | Ռուսաց լեզու և գրականություն |
| **Արվեստի ամբիոն** | |
| 021401.01.7 | Դեկորատիվ կիրառական արվեստ |
| **Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն** | |
| 101501.02.7 | Կայուն զբոսաշրջություն |
| **Պատմության և փիլիսոփայության ամբիոն** | |
| 011401.18.7 | Պատմություն |
| **Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն** | |
| 042101.01.7 | Իրավագիտություն |
| **Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն** | |
| 031301.01.7 | Հոգեբանություն |
| 092301.01.7 | Սոցիալական աշխատանք |
| **Մանկավարժության ամբիոն** | |
| 011301.01.7 | Տարրական մանկավարժություն և մեթոդիկա |
| 011102.04.7 | Կրթության կազմակերպում |
| 011301.03.7 | Սոցիալական մանկավարժություն |
| 011302.05.7 | Հատուկ մանկավարժություն |
| 011302.04.7 | Լոգոպեդիա |
| **Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն** | |
| 011401.09. 7 | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ |
| **Ռազմական ամբիոն** | |
| 011401.16.7 | Նախնական զինվորական պատրաստություն |

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ հիմնական գործառույթները.

- Բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի ՄԿԾ-ների մասնագրերի, ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի լրամշակման գործընթացի կազմակերպում և վերահսկում:

  Հաշվետու շրջանում իրականացվել է ՄԿԾ-ների բարելավման գործընթաց: Ըստ անհրաժեշտության՝ քննարկվել են այն հիմնական սկզբունքները, որոնք ՄԿԾ-ների բարելավման գործընթացի համակարգային կազմակերպման դիտանկյունից ուղենշային էին 2021-2022 ուստարվա ավարտին:

- Հաշվետու տարում՝ 2021-2022 ուստարվա ավարտին մասնագիտական ամբիոնների հետ համատեղ կազմվել է ՇՊՀ-ի կողմից թողարկվող կրթական ծրագրերի բարելավման պլան՝ նկատի ունենալով ներքին և արտաքին շահառուների, նաև հատուկ կարծիքի կարգավիճակ ունեցող դիտարկումները:
- Բարելավվել են ներքին իրավական մի շարք ակտեր, որոնք հնարավորություն են ընձեռելու ոչ միայն կրթական ծրագրերի մշակման, բարելավման, մշտադիտարկման գործընթացները դարձնել առավել արդյունավետ, այլև ապահովել դրանց իրականացման որակը: Հաշվետու ուստարում աշխատանքներ են իրականացվել ՇՊՀ-ի Զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական ուղղությունների, նպատակների և խնդիրների հստակեցման ուղղությամբ՝ հենվելով բուհի ինքնավերլուծության, արտաքին փորձագիտական գնահատումների վրա:
- Իրականացվել են նաև բուհի գործառույթներից բխող ամենամյա գործողություններ՝ մասնագիտական ամբիոնների ուսումնական բեռնվածությունների կազմումը, ստուգումը, կատարման վերահսկումը, ժամավճարային հիմունքներով աշխատողների կատարողականների ստուգումը, ինչպես նաև բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի ուսուցման դասատախտակների ստուգումը և ուսումնական գործընթացի իրականացման ապահովումը լսարանային ֆոնդով, առկա և հեռակա

ուսուցման գործընթացի կայացման վերահսկումը, դասամատյանների վարումը:

- Իրականացվել են ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստումը և հաշվառումը, ավարտական, ամփոփիչ և քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը՝ ՇՊՀ-ի Գիտական խորհրդին ներկայացնելով ամփոփիչ ատեստավորման արդյունքները: Մասնագիտական ամբիոններում և ֆակուլտետային ընդլայնված նիստերում քննարկվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների առաջարկություններն ու դիտարկումները, առաջացած խնդիրները: 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեստավորման թույլտվություն է տրվել 517 ուսանողների, որոնցից ատեստավորման պահանջները հաղթահարել են 511-ը, 6 ուսանողներ չեն հաղթահարել դրանք:
- Հաշվետու տարում իրականացվել են ուսումնական պլաններով նախատեսված մանկավարժական, ուսումնական, արտադրական և այլ պրակտիկաների կազմակերպումը, վերահսկումը, արդյունքների ամփոփումը և պրակտիկայի վայրերի վճարման գործընթացի կազմակերպման փաստաթղթային ապահովումը: Պրակտիկաներն իրականացնելու համար ներկայումս ՇՊՀ-ն ունի 100-ից ավելի գործող պայմանագրեր, որոնք կնքված են պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ: Վերջին տարիներին ընդլայնվել է պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը՝ ընդգրկելով բանկեր, դեղատներ, թանգարաններ, հյուրանոցներ, արտադրամասեր, զբոսաշրջային գործակալություններ, ԶԼՄ խմբագրություններ, խնամքի, զարգացման, հոգեբանական և սոցիալական աջակցության կենտրոններ, իրավաբանական ընկերություններ, տեղեկատվական, սոցիոլոգիական, ինժեներական, հետազոտական կենտրոններ, գրադարան, արխիվ, ֆինանսական գործունեության ուսումնասիրման կենտրոններ և այլն:

Պրակտիկաների իրականացման ընթացքում Ուսումնամեթոդական գործընթացների կառավարման կենտրոնի կողմից ոչ միայն

վերահսկողություն, այլև համապատասխան նախապատրաստական աշխատանքներ և մշտական խորհրդատվություն է իրականացվել:

Հաշվետու ուսումնական տարվա 1-ին կիսամյակում կազմակերպվել են պրակտիկաներ թվով 546 ուսանողների համար, 2-րդ կիսամյակում՝ թվով 437 ուսանողների համար:

2021-2022 ուստարում պրակտիկա է պլանավորվել, իրականացվել և ամփոփվել 1213 ուսանողների համար:

- Բուհի համար կարևոր է նաև «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի հետ համագործակցությունը: Հաշվետու տարում «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի մասնակից ուսանողների թիվը առաջին կուրսում կազմում է 17 ուսանող և 7 ուսանող՝ երկրորդ կուրսում: Ծրագրի 24 մասնակից ուսանողների համար ապահովվել է մշտական կապ ծրագրերը թողարկող և սպասարկող ամբիոնների, դասավանդող դասախոսների հետ:
- Բակալավրի (առկա) և մագիստրատուրայի անվճար-վճարովի համակարգերում իրականացվել է ուսանողների փոխատեղում /ռոտացիա/ ՝ առաջնորդվելով գործող կարգերով: Ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումն իրականացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ՇՊՀ-ի ֆինանսական միջոցների հաշվին: Առաջադիմության արդյունքներով պետական կրթաթոշակ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի մոտ 311 ուսանողների:
- Հաշվետու շրջանում հաջողությամբ կազմակերպվել են նաև ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Պատրաստվել են ՀՀ Զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, տարբեր պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամանների նախագծեր: Հաշվետու ժամանակահատվածում բուհից հեռացված, ազատված ուսանողների ընդհանուր թվաքանակը 148 է, իսկ վերականգնվածներինը՝ 32: ՀՀ զինված ուժերում ծառայության են մեկնել 64 ուսանողներ, վերադարձել են 58-ը: Տեղափոխության են ենթարկվել 37 ուսանողներ:

- Պատշաճ կերպով կազմակերպվել է նաև միջին մասնագիտական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած 28 շրջանավարտների՝ 2021-2022 ուսումնական տարում ՇՊՀ-ում կրթությունը շարունակելու գործընթացը. Նրանցից համապատասխան մասնագիտություններով հրամանագրվել է 19 ուսանող: Կազմակերպվել է նաև նախորդ ուսումնական տարվա(ների) ամփոփիչ ատեստավորման քննություններին չներկայացած կամ անբավարար գնահատված ուսանողների կցագրման (թվով 6 ուսանող) և ամփոփիչ ատեստավորման մասնակցության թույլտվության հրամանագրման (թվով 5 ուսանող) գործընթացը:
- Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին դիտարկվում է գերազանցության դիպլոմների թվաքանակի աճ, որը մագիստրատուրայում, թերևս, պայմանավորված է դիպլոմների շնորհման կարգի մեջ իրականացված փոփոխությամբ, համաձայն որի՝ 90 և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողին շնորհվում է գերազանցության դիպլոմ՝ ի տարբերություն նախորդ կարգի, որը սահմանում էր 95 և բարձր ՄՈԳ: Խնդրի հաղթահարման առումով նախատեսվում է իրականացնել մնացորդային գիտելիքի ստուգում:

# 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ, ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՐՍԵՐԻ

**(անվճար՝ պպ, և վճարովի՝ վճ. ուսուցման տեղերի խմբավորմամբ)**

### Առկա բակալավր

| № | Ֆակուլտետ | I կուրս | | II կուրս | | III կուրս | | IV կուրս | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պպ | վճ | պպ | վճ | պպ | վճ | պպ | վճ | |
| 1. | Բնագիտամաթեմատիկական | 10 | 33 | 21 | 26 | 14 | 43 | 6 | 20 | **173** |
| 2. | Հումանիտար գիտությունների և արվեստի | 26 | 90 | 27 | 98 | 22 | 52 | 16 | 17 | **348** |
| 3. | Սոցիալական գիտությունների և իրավունքի | 17 | 63 | 17 | 30 | 13 | 58 | 8 | 18 | **224** |
| 4. | Մանկավարժության | 14 | 31 | 12 | 26 | 6 | 25 | 6 | 17 | **137** |
| 5. | Ռազմական ամբիոն | 7 | 6 | 7 | 8 | 4 | 1 | 2 | 5 | **40** |
| **Ընդամենը** | | **74** | **223** | **84** | **188** | **59** | **179** | **38** | **77** | **922** |

### Հեռակա բակալավր*

| № | Ֆակուլտետ | I կուրս | II կուրս | III կուրս | IV կուրս | V կուրս | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Բնագիտամաթեմատիկական | 38 | 34 | 36 | 23 | 41 | **172** |
| 2. | Հումանիտար գիտությունների և արվեստի | 13 | 17 | 23 | 13 | 19 | **85** |
| 3. | Սոցիալական գիտությունների և իրավունքի | 60 | 47 | 61 | 40 | 44 | **252** |
| 4. | Մանկավարժության | 47 | 53 | 55 | 46 | 52 | **253** |
| 5. | Ռազմական ամբիոն | 15 | 31 | 19 | 19 | 25 | **109** |
| **Ընդամենը** | | **173** | **182** | **194** | **141** | **181** | **871** |

*Հեռակա ուսուցումը միայն վճարովի է:

## Մագիստրատուրա

| № | Ֆակուլտետ | I կուրս | | II կուրս | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | պպ | վճ | պպ | վճ | |
| 1. | Բնագիտամաթեմատիկական | 8 | 27 | 11 | 30 | **76** |
| 2. | Հումանիտար գիտությունների և արվեստի | 11 | 20 | 11 | 21 | **63** |
| 3. | Սոցիալական գիտությունների և իրավունքի | 14 | 46 | 10 | 47 | **117** |
| 4. | Մանկավարժության | 7 | 59 | 6 | 73 | **145** |
| 5. | Ռազմական ամբիոն | 2 | 2 | 3 | | **7** |
| **Ընդամենը** | | **42** | **154** | **41** | **171** | **408** |

## 2021-2022 ուստարվա ուսանողների ընդհանուր ամփոփ կազմը /առկա բակալավր, հեռակա բակալավր, մագիստրատուրա /

| № | Ֆակուլտետ | առկա բակալավր | հեռակա բակալավր | մագիստրատուրա | ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Բնագիտամաթեմատիկական | 173 | 172 | 76 | **421** |
| 2. | Հումանիտար գիտությունների և արվեստի | 348 | 85 | 63 | **496** |
| 3. | Սոցիալական գիտությունների և իրավունքի | 224 | 252 | 117 | **593** |
| 4. | Մանկավարժության | 137 | 253 | 145 | **535** |
| 5. | Ռազմական ամբիոն | 40 | 109 | 7 | **156** |
| **Ընդամենը** | | **922** | **871** | **408** | **2201** |

**Ասպիրանտուրայում ուսումնառողների թվաքանակը**
**Ասպիրանտ/ հայցորդներ՝ ըստ ֆակուլտետների**
**/2021-2022 ուստարի/**

| № | Ֆակուլտետ | I կուրս | II կուրս | III կուրս | IV կուրս | V կուրս | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Բնագիտամաթեմա տիկական | 4 | | | | | **4** |
| 2. | Հումանիտար գիտությունների և արվեստի | | 1 | 1 | | | **2** |
| 3. | Սոցիալական գիտությունների և իրավունքի | | | | | | |
| 4. | Մանկավարժության | 1 | | | 1 | 1 | **3** |
| 5. | Ռազմական ամբիոն | | | | | | |
| **Ընդամենը՝** | | **5** | **1** | **1** | **1** | **1** | **9** |

Կարևորելով ուսանողական համակազմերի համալրման հարցը՝ բուհը ուսանողների հավաքագրման, մասնագիտական կողմնորոշման նպատակով ԿԾ-ների (բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի) և ընդունելության գործընթացին վերաբերող տեղեկատվությունը տարածում է համապատասխան պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի միջոցով, ինչպես նաև զանգվածային լրատվության այլ միջոցներով (հեռուստատեսություն, շաբաթաթերթեր և այլն):

Ուսանողների հավաքագրման գործընթացներն իրականացվում են բաց դասերի և արտահամալսարանական միջոցառումների, ամառային դպրոցի, նաև բաց դռների միջոցով:

Ուսանողների հավաքագրման համար կիրառվող մեթոդներից են նաև մասնագիտական կողմնորոշմանն ուղղված խորհրդատվական հանդիպումները ինչպես կրթական հաստատությունների, այնպես էլ այլ կազմակերպությունների համար: Նախապես հաստատված ժամանակացույցով իրականացվում են այցեր, որոնց ընթացքում ներկայացվում է համալսարանի թողարկվող մասնագիտությունների, ԿԾ-ների, շնորհվող որակավորումների, ուսումնական գործընթացի, ռեսուրսների և դիմորդներին հետաքրքրող այլ հարցերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

# 5.ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

ՇՊՀ-ի ՌԾ-ում ամրագրված ռազմավարական նպատակներից է ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերով համալրումն ու ապահովումը:

ՄԿԾ-ներն իրականացնելու համար բուհն ապահովված է անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական (այսուհետ՝ ՊԴ) և ուսումնաօժանդակ (այսուհետ՝ ՌՒՕ) համապատասխան կազմերով: Բուհում գործում են ՊԴ և ՌՒՕ կազմերի ձևավորման, համալրման, տեղակալման քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք՝

- կոչված են՝ նպաստելու մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող ՊԴ և ՌՒՕ կազմերի ընտրությանը, պահպանմանն ու կայունությանը,
- հիմնված են ՀՀ Կրթության և գիտության նախարարության՝ 1996 թվականի նոյեմբերի 25-ի «ՀՀ պետական բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման մասին» թիվ 311-Մ հրամանի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների դրույթների վրա,
- համապատասխանում են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգի պահանջներին,
- ամրագրված են ՇՊՀ-ի կանոնադրությունում, ներքին կարգապահական կանոններում, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգում:

Բուհում գործում են հիմնական, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու հստակ պայմաններ և ընթացակարգ՝ ապահովելով ՊԴ և ՌՒՕ անձնակազմերի համալրումը և նպաստելով առավել որակյալ աշխատակիցներ ունենալուն:

Վերջին 3 տարիների կտրվածքով ստորև ներկայացվում է ՇՊՀ-ի ՊԴ կազմն՝ ըստ գիտական աստիճանների և կոչումների.

| Ուստարի | ՊԴ կազմ | Գիտական աստիճան ունեցողների թվաքանակը | | Գիտական կոչում ունեցողների թվաքանակը | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Դոկտոր | Գիտ. թեկնածու | Ակադեմիայի թղթակից անդամ | Պրոֆեսոր | Դոցենտ |
| 2019-2020 | 255 | 17 | 131 | 1 | 16 | 104 |
| 2020-2021 | 266 | 15 | 141 | 1 | 14 | 101 |
| 2021-2022 | 247 | 17 | 127 | 1 | 12 | 98 |

Ինչպես երևում է աղյուսակից, համալսարանի ՊԴ կազմի գերակշիռ մասն ունի գիտական աստիճաններ և/կամ գիտական կոչումներ:

ՇՊՀ-ի ՊԴ կազմի մասնագիտական կարողությունները համապատասխանում են կրթական ծրագրերով շնորհվող որակավորումներին: Մասնագիտության կրթական ծրագրի՝ ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող առաջնային պահանջներն են բազային մասնագիտական կրթությունը, գիտական աստիճանը և/ կամ կոչումը:

Վերջին 3 տարվա կտրվածքով ստորև ներկայացվում է ՇՊՀ-ի ՊԴ կազմն՝ ըստ գիտական աստիճանների և/կամ կոչումների և հիմնական աշխատողների բաշխվածության.

| Ուստարի | ՇՊՀ ՊԴ կազմի թվաքանակը | ՊԴ կազմում գիտական աստիճան և/կամ կոչում ունեցողների | | ՊԴ կազմում հիմնական աշխատողների | |
|---|---|---|---|---|---|
| | | թվաքանակը | %-ը | թվաքանակը | %-ը |
| 2019-2020 | 255 | 157 | 61.6 | 189 | 74.1 |
| 2020-2021 | 266 | 157 | 59 | 177 | 66,5 |
| 2021-2022 | 247 | 144 | 58 | 169 | 68.4 |

ՇՊՀ-ի ՊԴ կազմը տարեցտարի համալրվում է գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող արհեստավարժ աշխատակիցներով, մասնավորապես, 2018-2022 թթ. (հունվար-օգոստոս) ընթացքում ՇՊՀ ՊԴ կազմի 11 ներկայացուցիչ ստացել են գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 13 ներկայացուցիչ՝ դոցենտի գիտական կոչում, 1 ներկայացուցիչ՝ պրոֆեսորի գիտական կոչում:

ՇՊՀ-ում ՊԴ կազմին գիտական կոչում շնորհելու հարցը քննարկվում է Գիտական խորհրդում փակ գաղտնի քվեարկությամբ:

**2018-2022 թթ.-ին գիտական կոչում ստացածների ցուցանիշները**

| 2018 թ. | 2019 թ. | 2020 թ. | 2021 թ. | 2022 թ. (ՀՈՒՆՎԱՐ- ՕԳՈՍՏՈՍ) |
|---|---|---|---|---|
| 5 | 1 | 1 | 5 | 2 |




**2018-2022 թթ.-ին գիտական աստիճան ստացածների ցուցանիշները**

| 2018 թ. | 2019 թ. | 2020 թ. | 2021 թ. | 2022 թ. (ՀՈՒՆՎԱՐ- ՕԳՈՍՏՈՍ) |
|---|---|---|---|---|
| 1 | 3 | 2 | 5 | 0 |

Առաջիկայում ՇՊՀ-ում ՊԴ կազմի մասնագիտական գործունեությանը ներկայացվող պահանջներն ենթակա են վերանայման և լրամշակման՝ կրթական համակարգում իրականացվող փոփոխություններին համահունչ (ի նկատի ունենալով

նաև ներկայումս շրջանառության մեջ դրված ՀՀ բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքը): Ներկայումս գործող ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման կանոնակարգը և Դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերը այն հիմնական նորմատիվային փաստաթղթերն են, որոնք կարգավորում են ոլորտը և նպաստում մատուցվող կրթական ծառայությունների որակի ապահովմանը: ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման կանոնակարգում առանձնացվում են ՊԴ կազմի տարակարգերը (դասախոս, ասիստենտ, դոցենտ և պրոֆեսոր), վերջիններիս ներկայացվող պահանջները և պաշտոնների տեղակալման չափանիշները՝ սահմանելով ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության տեսակները:

Դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերում, սահմանված են դասախոսի տարեկան ծանրաբեռնվածության ձևավորման նորմերը՝ դասախոսական տարակարգերին համապատասխան, որոնք արտահայտվում են նաև դասախոսի աշխատանքի անհատական պլանում:

ՊԴ կազմին ներկայացվող պահանջները արտահայտվում են նաև դասախոսի աշխատանքի անհատական պլանով և 2018թ.-ից ներդրված ՇՊՀ-ի ՊԴ կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգում ներկայացված ձևաթերթով: ԳՔՈԱԿԿ-ի կողմից առաջարկվել է համապատասխան պահանջները ներկայացնել ՄԿԾ-ի մասնագրերում՝ յուրաքանչյուր ՄԿԾ-ին համապատասխան:

ՇՊՀ-ի ՌԾ-ում ամրագրված ռազմավարական նպատակին համապատասխան իրականացվող քայլերից է ՊԴ կազմի պարբերաբար գնահատման մեխանիզմների բարելավումը, որն իրագործելու համար համալսարանն իրականացնում է ՊԴ կազմի վարկանիշավորման գործընթաց՝ բազմագործոն գնահատման հիմքի վրա: Ըստ էության, գնահատման համար օգտագործվում են հինգ գործիքներ, որոնցից առաջին երկուսը հաշվետվության ձևաչափով են, իսկ մնացած երեքը հետազոտական մեթոդներ են: Դրանք են՝

1. դասախոսի աշխատանքի անհատական պլան,
2. դասախոսի՝ տարբեր ձևաչափերով հաշվետվություններ,
3. ՇՊՀ-ի ՊԴ համակազմի գործունեության որակի արդյունավետության վարկանիշային տարեկան գնահատման ձևաթերթ,

4. դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման հարցարան,
5. ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցարան:

Վերլուծության և վարկանիշավորման արդյունքները ղեկավար կազմի կողմից կարող են օգտագործվել որպես հիմք՝ ՊԴ կազմի աշխատանքային պայմանագրերի վերակնքման, երկարաձգման կամ խզման, մրցութային ընտրությունների, պաշտոնական առաջընթացի, նյութական և բարոյական խրախուսման միջոցների կիրառման, ինչպես նաև կադրերի վերապատրաստման ուղղությամբ միջոցառումներ կազմակերպելու դեպքերում: Նշենք, որ ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցարանների հարցաշարերն ունեն վերանայման կարիք:

2021-2022 ուստարում անցկացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ համալսարանի ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են իրենց դասախոսների դասավանդման որակներից, մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաներից:

ՇՊՀ-ի շրջանավարտների կողմից բուհում ստացած կրթության, բուհի մասնագիտական և կազմակերպչական վարկանիշների գնահատման հարցումները ցույց են տալիս, որ համալսարանի՝ 2021-2022 ուստարվա շրջանավարտները հիմնականում գոհ են իրենց դասավանդողների մասնագիտական պատրաստվածության աստիճանից և որակներից:

Գնահատման այս քաղաքականությունն ու ընթացակարգերը հնարավորություն են տալիս դասախոսական կազմին՝ տեղեկանալու իրենց աշխատանքների կատարողականին, թերություններին և ձեռքբերումներին, վերհանելու կարիքները, իսկ ղեկավարությանը՝ ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ: Այս գործընթացների համալիր կիրարկումը համալսարանին հնարավորություն է տալիս՝ ՊԴ կազմն համալրելու որակյալ կադրերով, և հիմնվելով արդյունքների վրա՝ կազմելու ՊԴ կազմի մասնագիտական որակների կատարելագործման ու վերապատրաստման համապատասխան ծրագրեր:

Կրթության ոլորտի հարափոփոխ զարգացումները և պահանջները ենթադրում են

ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական համապատասխան որակի ապահովում և զարգացում: Ուստի, համալսարանը ԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար իր առջև խնդիր է դրել՝ ՊԴ կազմն ոչ միայն համալրելու բարձրորակ դասավանդողներով, այլև նրանց համար ստեղծելու շարունակական կատարելագործման հնարավորություններ և աշխատանքային համապատասխան միջավայր:

Դեռևս 2013թ.-ից ներդրվել է ՊԴ և ՈւՕ կազմերի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման կանոնակարգը, որի համաձայն աշխատակիցների որակավորման բարձրացման առումով հնարավորություն է տրվում կրթությունը շարունակելու կրթական հաջորդ մակարդակներում՝ պահպանելով աշխատանքային պայմանները: ՊԴ կազմի վերապատրաստումն ու մասնագիտական որակավորման բարձրացումն իրականացվում են երկու ուղղություններով՝ ընդհանուր-պարտադիր և հատուկ-մասնագիտական: Ըստ այդմ՝ վերապատրաստումներն իրականացվում են պլանավորված՝ պարտադիր և/կամ բացահայտված կարիքներից ելնելով, և 2018թ.-ին ԳԽ-ի կողմից ընդունվել է ՇՊՀ-ի ՊԴ կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգը, որի հիման վրա հաշվարկվում են դասախոսի վարկանիշային միավորները՝ կարևորվելով ՊԴ կազմի կատարելագործումը համապատասխան ուղղություններով: Մասնավորաբար, կարևորվում է գիտական աստիճան և կոչում ունենալը, օտար լեզուներին տիրապետելը, մասնագիտական և ոչ մասնագիտական վերապատրաստումներին մասնակցությունը, ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական գործունեությունը, գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեությունը, հանրային հասարակական գործունեությունը: Առաջին ուսումնական տարին է, ինչ կարգը ներդրվել է, և իրականացվում է առաջին հետազոտությունն այս ուղղությամբ:

Վերապատրաստման ցուցանիշները ցույց են տալիս, որ ՊԴ կազմը մշտապես կատարելագործում է իր որակները՝ մասնակցելով ինչպես ՇՊՀ-ի, այնպես էլ այլ կազմակերպությունների և բուհերի կողմից իրականացված վերապատրաստումների դասընթացների:

Վերջին 3 տարիների վերապատրաստումների մասնակցության տվյալներն են.

ՇՊՀ ՊԴ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ




Նկատի ունենալով ՊԴ կազմի կարիքների վերհանման հարցումների արդյունքները՝ կարելի է նշել, որ վերապատրաստումների անհրաժեշտություն կա ինչպես մասնագիտական, այնպես էլ մանկավարժական կոմպետենցիաների զարգացման ուղղությամբ: Առաջիկայում ինչպես ներբուհական վերապատրաստումներ կազմակերպելով, այնպես էլ կապ հաստատելով այլ կազմակերպությունների և բուհերի հետ՝ ՊԴ կազմին ընձեռվելու է մասնագիտական վերապատրաստումների հնարավորություն: Այս ուղղությամբ մեծապես պետք է օգտագործել հեռաուսուցման հարթակներով առաջարկվող հնարավորությունները:

Նշենք, որ դասավանդողների կատարելագործմանն ուղղված մեխանիզմներից է նաև գիտական սեմինարների անցկացումը, որոնք համակարգում է ԳՔՈԱԿԿ-ն՝ սերտորեն համագործակցելով մասնագիտական ամբիոնների հետ: 2018թ.-ից առ այսօր իրականացվել են 60-ից ավել գիտական սեմինարներ, որոնց շուրջ 29%-ն ունեն մեթոդամանկավարժական, իսկ 77%-ը՝ մասնագիտական ուղղվածություն՝ բովանդակային առումով ընդգրկելով գրեթե բոլոր ՄԿԾ-ները:

ՊԴ կազմի կայունության ապահովման և հոսունության նվազեցման նպատակով համալսարանը կիրառում է տարբեր մեխանիզմներ, որոնցից են՝

➢ <u>**դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերը**</u>՝ տարբերակված մոտեցում ցուցաբերելով գիտական աստիճան և/ կամ կոչում ունեցող և չունեցող աշխատակիցների ծանրաբեռնվածությունների նորմերի սահմանների միջև: Եթե գիտությունների դոկտոր, պրոֆեսորի համար 1 դրույք ծանրաբեռնվածությունը կազմում է 700-750 ժամ, ապա գիտական աստիճան և կոչում չունեցող դասախոսի դեպքում՝ 900-1080 ժամ (հիմք՝ հրաման թիվ 201, 04.10.2017թ.),

➢ <u>**աշխատավարձի հաշվարկման դրույքաչափերը**</u>, որոնցում դարձյալ հստակ տարբերակված մոտեցում է ցուցաբերվում գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող և չունեցող աշխատակիցներին վճարվող աշխատավարձերի դրույքաչափերի միջև: Եթե ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտությունների դոկտոր, պրոֆեսորի 1 դրույքաչափին համապատասխան ամսական հաշվարկային աշխատավարձը կազմում է 230.000 ՀՀ դրամ, ապա գիտական աստիճան և կոչում չունեցող դասախոսի համար՝ 150.000 ՀՀ դրամ (հիմք՝ հրաման թիվ 207, 06.10.2017թ.), ինչն էական խթանող գործոն է բարձր որակավորում ունեցող ՊԴ կադրերի կայունության ապահովման համար:

➢ <u>**դրամաշնորհների, հավելավճարների և պարգևավճարների տրամադրումը**</u>, ինչը բավական արդյունավետ «գործիք» է ՊԴ կազմի՝ գիտամանկավարժական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցությունը խրախուսելու համար: Համալսարանում գործում է.

ա) <u>գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ</u>, ըստ որի՝ սահմանվում են ՊԴ կազմի և ուսանողների կողմից իրականացվող գիտական (գիտամեթոդական) գործունեության համար համալսարանի միջոցներից պայմանագրային թեմատիկ ֆինանսավորվող դրամաշնորհի տրամադրման և այդ նպատակով մրցույթի անցկացման սկզբունքներն ու ընթացակարգը,

բ) <u>ՊԴ կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգ,</u> ըստ որի՝ յուրաքանչյուր տարեվերջին, ըստ աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության արդյունքների (ըստ գիտական ամսագրերում, գիտաժողովների ժողովածուներում տպագրված հոդվածների, մենագրությունների, գիտամեթոդական աշխատանքների քանակի), համալսարանն իր աշխատակիցներին տրամադրում է հավելավճար /մանրամասն՝ 6-րդ չափանիշում/,

գ) ձևավորված սովորությամբ, որպես «կանոն», յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին ՇՊՀ-ի հիմնական աշխատակիցները ռեկտորի հրամանով պարգևատրվում են մեկ ամսվա աշխատավարձի պաշտոնական դրույքաչափով:

ՊԴ կազմի կայունության ապահովման տեսանկյունից էական է սերնդափոխության ապահովումը: Վերջին 3 ուստարիներին ՇՊՀ-ի ՊԴ կազմի տարիքային բաշխվածությունը ներկայացվում է ստորև:

| Ուստարի | ՊԴ կազմ | ՊԴ կազմում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | մինչև 35 տարեկանների | | 35-ից 65 տարեկանների | | 65-ից բարձր տարիք ունեցողների | |
| | | թվաքանակը | %-ը | թվաքանակը | %-ը | թվաքանակը | %-ը |
| 2018-2019 | 242 | 40 | 16.5 | 166 | 68.6 | 36 | 14.9 |
| 2019-2020 | 255 | 41 | 16.1 | 177 | 69.4 | 37 | 14.5 |
| 2020-2021 | 266 | 36 | 13,5 | 182 | 68,4 | 48 | 18 |
| 2021-2022 | 247 | 24 | 9,7 | 176 | 71,3 | 47 | 19 |

ՊԴ կազմի կայունության ապահովման, սահուն և կառավարելի սերնդափոխության իրականացման ուղղությամբ ՇՊՀ-ն որդեգրել է երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականություն, այն է՝ մագիստրոսական ԿԾ-ների իր լավագույն շրջանավարտներին համալսարանն ուղղորդում է՝ շարունակելու հետազոտողի ԿԾ-ով կրթությունը:

Միաժամանակ նշենք, որ համատեղող և/կամ ժամավճարային կարգավիճակ ունեցող մասնագետները համալսարանի ՊԴ կազմում փոքր տոկոս են կազմում, չեն գերազանցում 29%-ը, ինչը վկայում է համալսարանի ինքնաբավ լինելու և ՊԴ կայուն կազմ ունենալու մասին:

Կարելի է փաստել, որ ՇՊՀ-ն վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի ուղղությամբ մեծավ մասամբ լուծել է առաջադրված խնդիրները և ապահովել կառավարման բավարար արդյունավետություն:

# 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

## 6.1. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2022 թ.-ին ՊԴ կազմի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն ամփոփված են 133 գիտական հոդվածներում, 17 թեզիսներում, 2 գիտամեթոդական աշխատանքներում, 1 մենագրությունում:

**2022 Թ. (ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ) ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ**

| ԱՄԲԻՈՆՆԵՐ | ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ | ՊԴ ԿԱԶՄ | ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ / ՊԴ ԿԱԶՄ |
|---|---|---|---|
| ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
| Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ | 31 | 30 | 1,03 |
| Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | 8 | 34 | 0,24 |
| Գործարարություն և վարչարարություն | 0 | 15 | 0 |
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
| Իրավագիտություն և քաղաքագիտություն | 1 | 14 | 0,07 |
| Հոգեբանություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք | 8 | 29 | 0,28 |
| Պատմություն և փիլիսոփայություն | 9 | 14 | 0,64 |
| ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
| Հայոց լեզու և գրականություն | 2 | 22 | 0,09 |
| Ռուսաց լեզու և գրականություն | 5 | 9 | 0,56 |
| Անգլերեն լեզու և գրականություն | 4 | 15 | 0,27 |

| | | | |
|---|---|---|---|
| Միջմշակութային հաղորդակցություն և զբոսաշրջություն | 0 | 7 | 0 |
| Արվեստ | 4 | 12 | 0,33 |
| ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
| Մանկավարժություն | 2 | 30 | 0,07 |
| Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա | 0 | 12 | 0 |
| ՀԱՄԱՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ | | | |
| Ռազմական | 0 | 7 | 0 |
| **Ընդամենը՝** | **74** | **250** | **0,3** |

2022 թ.-ին թվաքանակով ամենաշատ հոդվածները տպագրվել են Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի ՊԴ կազմի ներկայացուցիչների կողմից:

Գիտական աշխատությունների՝ 2022 թ.-ի հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշը մեկ դասախոսի համար 0,5-ից ցածր չէ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ, Պատմության և փիլիսոփայության և Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնների համար, իսկ մյուս ամբիոնների դեպքում այդ ցուցանիշը չի գերազանցում 0,33-ը:

**2022 Թ. (ՀՈՒՆՎԱՐ- ՕԳՈՍՏՈՍ) ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ**



**2022 Թ. (ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ) ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ**

| ՖԱԿՈՒԼՏԵՏ | ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ | ՊԴ ԿԱԶՄ | ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ / ՊԴ ԿԱԶՄ |
|---|---|---|---|
| Բնագիտամաթեմատիկական | 39 | 79 | 0,5 |
| Սոցիալական գիտությունների և իրավունքի | 18 | 57 | 0,3 |
| Հումանիտար գիտությունների և արվեստի | 15 | 65 | 0,2 |
| Մանկավարժության | 2 | 42 | 0,05 |
| **Ընդամենը՝** | 74 | 243 | 0,3 |

**2022 Թ. (ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ) ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ / ՊԴ ԿԱԶՄ**




Ըստ տպագրված գիտական աշխատանքների թվի, ինչպես նաև մեկ դասախոսի գիտական աշխատությունների ցուցանիշի՝ 2022 թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում առաջատար է Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետը:

# 2022 Թ. (ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ) ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ՝ ԸՍՏ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ

| | Scopus կամ Web of Science շտեմարան-ներում ընդգրկված գիտական ամսա-գրում հոդված | Միջազգային վարկանիշավորում ունեցող գիտական ամսագրում հոդված | ՌԴ ԲՈՀ-ի ցուցա-կում ընդգրկված գիտական ամսա-գրում և ժողովա-ծուում հոդված | РИНЦ համակար-գում ընդգրկված գիտական ամսա-գրում և ժողովա-ծուում հոդված | ՀՀ ԲՈԿ-ի ցուցա-կում ընդգրկված գիտական ամսա-գրում հոդված | ՇՊՀ Գիտական տեղեկագրում հոդված | Միջազգային գիտաժողովի ժողովածուում հոդված | Միջազգային գիտաժողովի ժողովածուում թեզիս | Միջազգային գրախոսվող ամսագրում հոդված | Գրախոսվող նեղ մասնագիտական ամսագրում հոդված | Հանրապետական գիտաժողովի ժողովածուում հոդված | Հանրապետական գիտաժողովի ժողովածուում թեզիս | Գիտամեթոդական ձեռնարկ | Գիտական մենագրություն | Այլ | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | | | | | | | | | | | | | |
| Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ | 7 | 1 | 4 | 1 | 9 | 3 | 2 | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 | **31** |
| Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | 0 | 0 | 0 | 0 | 3 | 4 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | **8** |
| Գործարարություն և վարչարարություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **0** |
| **Ընդամենը՝** | **7** | **1** | **4** | **1** | **12** | **7** | **2** | **1** | **1** | **1** | **0** | **0** | **0** | **1** | **1** | **39** |
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | | | | | | | | | | | | | |
| Իրավագիտություն և քաղաքագիտություն | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **1** |
| Հոգեբանություն, սոցիոլոգիա և սոց. աշխ. | 0 | 0 | 0 | 0 | 4 | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 | **8** |
| Պատմություն և փիլիսոփայություն | 0 | 0 | 0 | 0 | 3 | 2 | 3 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | **9** |
| **Ընդամենը՝** | **0** | **0** | **0** | **0** | **8** | **3** | **3** | **1** | **0** | **0** | **0** | **1** | **0** | **0** | **2** | **18** |
| ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | | | | | | | | | | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | **2** |
| Ռուսաց լեզու և գրականություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 3 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **5** |
| Անգլերեն լեզու և գրականություն | 0 | 3 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **4** |
| Միջմշակութային հաղորդակցություն և զբոսաշրջ. | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **0** |
| Արվեստ | 0 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **4** |
| **Ընդամենը՝** | **0** | **3** | **0** | **0** | **1** | **5** | **3** | **2** | **0** | **0** | **1** | **0** | **0** | **0** | **0** | **15** |
| ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | | | | | | | | | | | | | |
| Մանկավարժություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | **2** |
| Ֆիզ. դաստ. տեսություն և մեթոդիկա | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **0** |
| **Ընդամենը՝** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **1** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **1** | **0** | **0** | **2** |
| Ռազմական | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **0** |
| **Ընդամենը՝** | **7** | **4** | **4** | **1** | **21** | **16** | **8** | **4** | **1** | **1** | **1** | **1** | **1** | **1** | **3** | **74** |
| Այլ աշխատակիցներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **1** |
| **Ընդամենը՝** | **0** | **6** | **3** | **1** | **27** | **16** | **9** | **12** | **0** | **1** | **0** | **0** | **1** | **0** | **6** | **82** |
| **Ընդամենը՝** | **7** | **10** | **7** | **2** | **48** | **32** | **17** | **16** | **1** | **2** | **1** | **1** | **2** | **1** | **9** | **156** |

## 2022 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ



2022 թ.-ին ՇՊՀ-ի ՊԴ կազմի կողմից հրատարակվել են գիտական աշխատություններ, որոնց շուրջ 50%-ը ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի ամսագրերում կամ ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում են տպագրվել: Scopus կամ Web of Science շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրում տպագրված հոդվածների թիվը 7 է, իսկ միջազգային վարկանիշավորում ունեցող գիտական ամսագրում տպագրված հոդվածների թիվը՝ 10:

Վերջին 5 տարիներին միջազգային վարկանիշավորում ունեցող գիտական ամսագրերում տպագրված հոդվածների թիվը մշտապես աճել է: Աճել է նաև ՀՀ ԲՈԿ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում (ներառյալ՝ ՇՊՀ-ի գիտական տեղեկագրում) տպագրված հոդվածների թիվը:

**ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ 2017 – 2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**




**ՎԵՐՋԻՆ 6 ՏԱՐԻՆԵՐԻՆ[1] ՄԵԿ ԴԱՍԱԽՈՍԻՆ ԸՆԿՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ**

| ՏԱՐԻ | ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԴ ԿԱԶՄ | ՄԵԿ ԴԱՍԱԽՈՍԻՆ ԸՆԿՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ |
|---|---|---|---|
| 2017 | 189 | 246 | 0.77 |
| 2018 | 164 | 242 | 0.68 |
| 2019 | 214 | 255 | 0.84 |
| 2020 | 177 | 264 | 0.67 |
| 2021 | 130 | 250 | 0.52 |
| 2022 | 156 | 247 | 0.63 |

[1] 2022թ.-ի համար ներկայացված են հունվար-օգոստոս ժամանակաշրջանի տվյալները:

2019 թ.-ին մեկ դասախոսի կողմից հրատարակված հոդվածների թիվը որոշակիորեն աճել է 2018 թ.-ի համեմատությամբ: Դա պայմանավորված է դասավանդողների նկատմամբ բուհի ցուցաբերած աջակցության ու խրախուսման քաղաքականությամբ, նաև այն հանգամանքով, որ 2018 թ.-ին կայացած «Կրթության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նյութերը տպագրվել են 2019 թ.-ին: Նույն թվականին տեղի է ունեցել նաև ՇՊՀ-ի 85-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովը, որի նյութերը տպագրվել են ՇՊՀ-ի գիտական տեղեկագրի II համարում: 2021 թ.-ին, ցուցանիշները նվազել են ինչը, թերևս, համավարակի և պատերազմի հետևանք է: 2022 թ.-ի ցուցանիշը աճել է 2021 թ.-ի համեմատությամբ:

Հարկավոր է ուշադրություն դարձնել, որ վերջին 4 տարիներին աճել են ինչպես միջազգային վարկանիշավորում ունեցող գիտական ամսագրերում, այնպես էլ ՌԴ ԲՈՀ-ի ցուցակում կամ РИНЦ համակարգում ընդգրկված գիտական ամսագրերում տպագրված հոդվածների քանակը:

Սակայն արդյունքները բավարար չեն, քանի որ գիտական աշխատանքները հիմնականում տպագրվում են նույն անձանց կողմից: Նաև առկա է այն հանգամանքը, որ գիտական աստիճան և կոչում ստանալուց հետո շատերը դադարում են գիտական կամ մեթոդական աշխատանքներ իրականացնել, ինչը համապետական խնդիր է: ՊԴ կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման մշակված և այժմ գործող կարգի համաձայն՝ գիտամեթոդական գործունեության ծավալման համար առանձին բաժին է տրամադրված և մեծ ազդեցություն ունի վարկանիշային համընդհանուր միավորի ձևավորման վրա:

## 6.2. ՇՊՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիրը հիմնադրվել է 2011թ.-ին Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից: Առաջին համարը հրատարակվել է 2013թ.-ին: Առաջին տարում լույս է տեսել տեղեկագրի 2 համար՝ Ա (Մաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտություններ, տնտեսագիտություն և աշխարհագրություն) և Բ (Հումանիտար ու

հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ) պրակներով, այնուհետև ՀՀ ԲՈՀ-ի պահանջով՝ 1 համար՝ նույնպես Ա և Բ պրակներով: Սակայն 2019թ.-ից սկսած՝ ԲՈԿ-ի պահանջով լույս է տեսնում տեղեկագրի 2 համար՝ Ա և Բ պրակներով: Հոդվածները հավաքագրվելուց հետո ենթարկվում են գրախոսության և միայն դրական կարծիքի դեպքում են ներկայացվում տպագրության:

2020 թ.-ի ընթացքում մշակվել և Գիտական խորհրդի՝ 2021 թ.-ի փետրվարի 22-ի նիստում հաստատվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական տեղեկագրի հրատարակման ընթացակարգը:

Պարբերականը մշտապես ընդգրկված է եղել ՀՀ ԲՈԿ-ի (նախկինում՝ ԲՈՀ-ի) ցուցակում: Միայն 2022 թ.-ին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունված ամսագրերի ցուցակում չի ընդգրկվել ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրի Բ պրակը՝ այն պատճառաբանությամբ, որ խմբագրական խորհուրդը համալրված չէ գիտության որոշ բնագավառների (իրավագիտություն, քաղաքագիտություն, հոգեբանություն) մասնագետներով: 2022 թ.-ի ընթացքում այդ ուղղությամբ մեծածավալ աշխատանք է կատարվել. խմբագրական խորհուրդը համալրվել է գիտության տարբեր բնագավառների մասնագետներով, և պարբերականը կրկին ընդգրկվել է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունված ամսագրերի ցուցակում:

Այսօր ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրի Ա պրակը լույս է տեսնում հետևյալ բնագավառներում՝

1) ֆիզիկամաթեմատիկական գիտություններ,
2) տեխնիկական գիտություններ,
3) կենսաբանական և գյուղատնտեսական գիտություններ,
4) գիտություններ Երկրի մասին,
5) տնտեսագիտություն,

Բ պրակը՝

1) բանասիրական գիտություններ,
2) պատմական գիտություններ,
3) մանկավարժական գիտություններ (այդ թվում՝ դասավանդման մեթոդիկաներ),
4) հոգեբանական գիտություններ,

5) արվեստագիտություն բնագավառներում:

ՇՊՀ-ի Գիտական խորհրդի նիստում հաստատվել են ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրի Ա (22 անդամ, որից 8-ը ներգրավված են արտերկրից) և Բ (31 անդամ, որից 6-ը ներգրավված են արտերկրից) պրակների խմբագրական խորհուրդները: Նշենք, որ խմբագրական խորհուրդներում 10-ական անդամ 2018-2022 թթ.-ին ունեն Scopus և/կամ Web of Science Core Collection, RSCI միջազգային գիտական շտեմարաններում տպագրված հոդվածներ: ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրի՝ 2022 թ.-ի համարներում տպագրված հոդվածներում հանդես են եկել արտերկրի 4 գիտնականներ՝ որպես հեղինակներ/համահեղինակներ:

**ՇՊՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ՀՈԴՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ**

| **ՇՊՀ-ի հեղինակների քանակ** | **Այլ հեղինակների քանակ** | **Ընդհանուր հեղինակների քանակ** |
|---|---|---|
| | 2019 N1, ՊՐԱԿ Ա | |
| 15 | 15 | 30 |
| | 2019 N1, ՊՐԱԿ Բ | |
| 10 | 6 | 16 |
| | Ընդամենը՝ | |
| 25 | 21 | 46 |
| | 2019 N2, ՊՐԱԿ Ա | |
| 11 | 60 | 71 |
| | 2019 N2, ՊՐԱԿ Բ | |
| 28 | 43 | 71 |
| | Ընդամենը՝ | |
| 39 | 103 | 142 |
| | Ընդամենը՝ | |
| 64 | 124 | 188 |

| | | |
|---|---|---|
| | 2020 N1, ՊՐԱԿ Ա | |
| 8 | 17 | 25 |
| | 2020 N1, ՊՐԱԿ Բ | |
| 20 | 11 | 31 |
| | Ընդամենը՝ | |
| 28 | 28 | 56 |
| | 2020 N2, ՊՐԱԿ Ա | |

| | | |
|---|---|---|
| 6 | 7 | 13 |
| | 2020 N2, ՊՐԱԿ Բ | |
| 14 | 19 | 33 |
| | Ընդամենը՝ | |
| 20 | 26 | 46 |
| | Ընդամենը՝ | |
| 48 | 54 | 102 |
| 2021 N1, ՊՐԱԿ Ա | | |
| 9 | 8 | 17 |
| | 2021 N1, ՊՐԱԿ Բ | |
| 27 | 20 | 47 |
| Ընդամենը՝ | | |
| 36 | 28 | 64 |
| | 2021 N2, ՊՐԱԿ Ա | |
| 8 | 23 | 31 |
| | 2021 N2, ՊՐԱԿ Բ | |
| 18 | 33 | 51 |
| | Ընդամենը՝ | |
| 26 | 56 | 82 |
| | Ընդամենը՝ | |
| 62 | 84 | 146 |
| 2022 N1, ՊՐԱԿ Ա | | |
| 6 | 36 | 42 |
| | 2022 N1, ՊՐԱԿ Բ | |
| 14 | 5 | 19 |
| Ընդամենը՝ | | |
| 20 | 41 | 61 |
| | 2022 N2, ՊՐԱԿ Ա | |
| 3 | 34 | 37 |
| | 2022 N2, ՊՐԱԿ Բ | |
| 15 | 2 | 17 |
| | Ընդամենը՝ | |
| 18 | 36 | 54 |
| | Ընդամենը՝ | |
| 38 | 77 | 115 |

### ՇՊՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿ՝ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ[2]

| ՇՊՀ-ի աշխատակից-հեղինակների մասնակցությամբ հոդվածներ | Միայն այլ հեղինակների մասնակցությամբ հոդվածներ | Ընդհանուր հոդվածներ |
|---|---|---|
| 2019 N1, ՊՐԱԿ Ա | | |
| 11 | 2 | 13 |
| 2019 N1, ՊՐԱԿ Բ | | |
| 8 | 3 | 11 |
| Ընդամենը՝ | | |
| 19 | 5 | 24 |
| 2019 N2, ՊՐԱԿ Ա | | |
| 10 | 30 | 40 |
| 2019 N2, ՊՐԱԿ Բ | | |
| 23 | 37 | 60 |
| Ընդամենը՝ | | |
| 33 | 67 | 100 |
| Ընդամենը՝ | | |
| 52 | 72 | 124 |
| 2020 N1, ՊՐԱԿ Ա | | |
| 4 | 6 | 10 |
| 2020 N1, ՊՐԱԿ Բ | | |
| 16 | 9 | 25 |
| Ընդամենը՝ | | |
| 20 | 15 | 35 |
| 2020 N2, ՊՐԱԿ Ա | | |
| 4 | 6 | 10 |
| 2020 N2, ՊՐԱԿ Բ | | |
| 11 | 18 | 29 |
| Ընդամենը՝ | | |
| 15 | 24 | 39 |
| Ընդամենը՝ | | |
| 35 | 39 | 74 |
| 2021 N1, ՊՐԱԿ Ա | | |
| 5 | 8 | 13 |

[2] Եթե հոդվածը տրված է համահեղինակությամբ, ապա այն ներառված է «ՇՊՀ-ի աշխատակից-հեղինակների մասնակցությամբ հոդվածների քանակ» սյան տակ

| | | |
|---|---|---|
| 2021 N1, ՊՐԱԿ Բ | | |
| 20 | 13 | 33 |
| Ընդամենը՝ | | |
| 25 | 21 | 46 |
| 2021 N2, ՊՐԱԿ Ա | | |
| 4 | 11 | 15 |
| 2021 N2, ՊՐԱԿ Բ | | |
| 14 | 26 | 40 |
| Ընդամենը՝ | | |
| 18 | 37 | 55 |
| Ընդամենը՝ | | |
| 43 | 58 | 101 |
| 2022 N1, ՊՐԱԿ Ա | | |
| 3 | 16 | 19 |
| 2022 N1, ՊՐԱԿ Բ | | |
| 13 | 1 | 14 |
| Ընդամենը՝ | | |
| 16 | 17 | 33 |
| 2022 N2, ՊՐԱԿ Ա | | |
| 3 | 13 | 16 |
| 2022 N2, ՊՐԱԿ Բ | | |
| 12 | 1 | 13 |
| Ընդամենը՝ | | |
| 15 | 14 | 29 |
| Ընդամենը՝ | | |
| 31 | 31 | 62 |

## ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՄԱՆ, ՍՐԲԱԳՐՄԱՆ, ՄԱԿԵՏԱՎՈՐՄԱՆ, ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ DOI ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

| Խմբագրման, սրբագրման, մակետավորման գումար (ՀՀ դրամ)/առանց հարկերի/ | Տպագրության գումար (ՀՀ դրամ) /ներառյալ հարկերը/ | DOI համարանիշի ստացման գումար (ՀՀ դրամ) /ներառյալ հարկերը/ |
|---|---|---|
| 2019 N1 ՊՐԱԿ Ա,Բ | | |
| 403.000 | 470.000 | |
| 2019 N2 ՊՐԱԿ Ա,Բ | | |
| 520.250 | 960.000 | |
| 2020 N1 ՊՐԱԿ Ա,Բ | | |

| | | |
|---|---|---|
| 214.000 | 250.000 | |
| 2020 N2 ՊՐԱԿ Ա,Բ | | |
| 211.250 | 255.000 | |
| 2021 N1 ՊՐԱԿ Ա,Բ | | |
| 253.250 | 405.108 | 46.000 |
| 2021 N2 ՊՐԱԿ Ա,Բ | | |
| 253.000 | 629.880 | 55.000 |
| 2022 N1 ՊՐԱԿ Ա,Բ | | |
| 153.500 | 361.200 | 33.000 |
| 2022 N2 ՊՐԱԿ Ա,Բ | | |
| 171.500 | 316.800 | 29.000 |

Այս ուղղությամբ 2020 թ.-ին ծախսված գումարների ցուցանիշներն էապես նվազել են: Խմբագրման, սրբագրման և մակետավորման աշխատանքներն իրականացվում են ՇՊՀ-ի աշխատակիցների կողմից, իսկ տպագրման համար մշտապես մրցույթ է հայտարարվում:

Նշենք, որ ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում տպագրված յուրաքանչյուր հոդվածի համար առկա է DOI. սա ՀՀ Ազգային գրադարանի հետ կնքված պայմանագրի հենքով է: Սա ևս ենթադրում է համապատասխան աշխատանք. յուրաքանչյուր հոդվածի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն է մուտքագրվում համապատասխան հարթակ:

| Տարի | ՇՊՀ Գիտական տեղեկագրին ներկայացրած հոդվածներ | Հեղինակներին հետ վերադարձված հոդվածներ | Տպագրված հոդվածներ | Տպագրված հոդվածների հաշվեկշիռը % |
|---|---|---|---|---|
| 2019 | 157 | 33 | 124 | 78,98 |
| 2020 | 91 | 17 | 74 | 81,3 |
| 2021 | 128 | 27 | 101 | 78,9 |
| 2022 | 86 | 24 | 62 | 72,09 |

ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրին ներկայացված հոդվածների շուրջ 72-81%-ն է տպագրվել, իսկ շուրջ 19-28 %-ը արտաքին գրախոսման արդյունքում արժանացել է բացասական կարծիքի:

## 6.3. ՊԴ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

2014թ. առ այսօր համալսարանի ՊԴ կազմին գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խրախուսման նպատակով տրամադրվում է հավելավճար՝ ըստ ԳՊՄԻ-ի ՊԴ կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգում (հաստատված 27 սեպտեմբերի 2014 թ. նիստում) ամրագրված գիտական գործունեության տեսակների: 2019 թ.-ին այն լրամշակվել է, և դեկտեմբերի 26-ի Գիտական խորհրդի նիստում հաստատվել ՇՊՀ-ի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգը. ըստ լրամշակված տաբերակի՝ հաշվարկն իրականացվել է 2019 և 2020 թթ.-ի համար: 2021 թ.-ի մարտի 18-ին Գիտական խորհրդի նիստում փաստաթուղթը կրկին լրամշակման է ենթարկվել, որը գործարկվել է 2021 թ.: 2022 թ.-ի մայիսի 4-ին Գիտական խորհրդի նիստում փաստաթուղթը կրկին լրամշակման է ենթարկվել, որտեղ մասնավորաբար կարևորվել է scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված պարբերականների հոդվածների տպագրության հարցը: Խրախուսման համար տրամադրվող գումարն ավելացվել է: Սա պայմանավորված է նաև ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի և ՀՀ ԲՈԿ-ի վարած քաղաքականությամբ: Թերևս, անհրաժեշտություն ենք տեսնում փաստաթուղթը վերանայելու՝ նկատի ունենալով նաև այժմյան Գիտական տեղեկագրի պարբերականների խմբագրական խորհուրդներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև ՀՀ Գիտական աստիճանաշնորհման նոր կանոնակարգի նախագծում ներկայացված մոտեցումները:

**2017-2021 ԹԹ.-Ի ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ՝ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ**

| ԱՄԲԻՈՆՆԵՐ | ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ /ՀՀ ԴՐԱՄ/ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2017 թ. | 2018 թ. | 2019թ. | 2020թ. | 2021թ |
| ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | | |
| Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ | 911.550 | 983.100 | 1.244.850 | 1.244.350 | 827.600 |
| Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | 275.700 | 505.670 | 496.950 | 422.600 | 320.300 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Գործարարություն և վարչարարություն | 139.800 | 199.200 | 116.480 | 116.000 | 17.500 |
| **Ընդամենը** | **1.327.050** | **1.687.970** | **1.895.780** | **1.782.950** | **1.165.400** |
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | | |
| Պատմություն և փիլիսոփայություն | 565.000 | 407.500 | 553.000 | 358.600 | 574.200 |
| Իրավագիտություն և քաղաքագիտություն | 0 | 105.000 | 14.500 | 64.000 | 179.600 |
| Հոգեբանություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք | 121.600 | 60.000 | 148.100 | 213.000 | 167.000 |
| **Ընդամենը** | **706.600** | **572.500** | **715.600** | **635.600** | **920.800** |
| ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | 225.000 | 210.000 | 341.375 | 199.000 | 143.800 |
| Ռուսաց լեզու և գրականություն | 265.000 | 195.000 | 196.000 | 149.000 | 157.500 |
| Անգլերեն լեզու և գրականություն | 175.000 | 217.500 | 334.500 | 355.375 | 384.000 |
| Միջմշակութային հաղորդակցություն և զբոսաշրջություն | 51.250 | 25.000 | 0 | 25.000 | 75.000 |
| Արվեստ | 130.000 | 177.500 | 46.000 | 102.000 | 155.000 |
| **Ընդամենը** | **846.250** | **825.000** | **917.875** | **830.375** | **915.300** |
| ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | | |
| Մանկավարժություն | 120.000 | 50.000 | 288.200 | 162.000 | 246.500 |
| Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա | 166.100 | 86.100 | 57.500 | 28.500 | 70.000 |
| **Ընդամենը** | **286.100** | **136.100** | **345.700** | **190.500** | **316.500** |
| Ռազմական | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| **Ընդամենը** | **3.166.000** | **3.221.570** | **3.854.955** | **3.439.425** | **3.318.000** |

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ընթացակարգն արդյունավետ է: Միաժամանակ այդ մասին են վկայում ըստ վարկանիշավորման աղյուսակի տպագրված աշխատանքների ցուցանիշները՝ ըստ տարիների: 2021 թ.-ին արդեն գործածվել է 18.03.2021 թ.-ին լրամշակված ընթացակարգի 3-րդ կետը:

Հարկ է նշել, որ 2019 թ.-ից որպես բաղադրիչ ավելացել են նաև գրախոսությունները (հոդվածների, ատենախոսական թեզերի)։ 2019 թ.-ին այդ բաղադրիչի համար տրամադրված հավելավճարը կազմում է 226.000 դրամ, 2020 թ.-ին՝ 191.000 դրամ, 2021 թ.-ին՝ 215800։

## 6.4 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանն իր միջոցների հաշվին 2016 թ.-ից հայտարարել է պայմանագրային թեմատիկ ֆինանսավորվող դրամաշնորհի մրցույթ՝ ՊԴ կազմի և ուսանողների կողմից իրականացվող գիտական (գիտամեթոդական) գործունեության համար։ Դրամաշնորհը համալսարանի գիտական գործունեության ներքին ֆինանսավորման ձևերից է և միտված է ՊԴ կազմի և ուսանողական համակազմի գիտական գործունեության հետագա զարգացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացում հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանը։ Դրամաշնորհը տրամադրվում է համալսարանի բոլոր մասնագիտություններին առնչվող հիմնարար և կիրառական գիտական հետազոտություն իրականացնելու համար 3-4 անձից կազմված հետազոտական (գիտական թեմայի) խմբերի նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված մինչև 3 գիտական թեմաներին՝ 12 կամ 24 ամիս ժամկետով՝ առավելագույնը համապատասխանաբար 4.8 և 9.6 միլիոն ՀՀ դրամ։ Խմբում պարտադիր պետք է ընդգրկվի ՇՊՀ-ի առնվազն 1 բարձր առաջադիմությամբ ուսանող (բակալավրի 3-4-րդ կուրսերի կամ մագիստրոսի/ հետազոտողի կրթական աստիճանի)։

Գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի մրցույթի՝ 2021թ.-ին տրված հայտարարությանը համապատասխան՝ Շիրակի պետական համալսարանի ՊԴ կազմի կողմից ներկայացվել է 3 հայտ.

| № | ԱՄԲԻՈՆ | ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ | ԹԵՄԱ |
|---|---|---|---|
| 1. | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | Մարտիրոսյան Լևոն (ղեկավար)<br>Սարգսյան Ռուդոլֆ<br>Աբրահամյան | Արագածոտնի մարզի տարածքային-ռեկրեացիոն ներուժը և զբոսաշրջային ռեսուրսների գնահատումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | Վարդիթեր<br>Գրիգորյան Լիանա<br>(աշխ. բակ. 2-րդ կուրս) | |
| 2. | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | Ներսիսյան Արմեն<br>(ղեկավար)<br>Վալեսյան Անահիտ<br>Ամազարյան Աիդա<br>Հակոբյան Քնարիկ<br>(աշխ. բակ. 1-ին կուրս) | Հետպատերազմյան շրջանում Շիրակի մարզի բնակչության կյանքի որակի քաղաքակրթական հետազոտություն |
| 3. | Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ | Մանուկյան Վարդան<br>(ղեկավար)<br>Նիկողոսյան Գագիկ<br>Սարգսյան Սամվել<br>(խորհրդատու)<br>Շահբազյան Անի<br>(հայցորդ 1-ին կուրս) | Մաթեմատիկական և ֆիզիկական տրամաբանական, որակական, դիվերգենտ խնդիրները որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց |

Ներկայացված 3 հայտերը, անցնելով տեխնիկական ստուգման և նախնական ընտրության, այնուհետև արտաքին փորձաքննության փուլերը, հաղթահարել են ներբուհական խորհրդի կողմից սահմանված շեմը և ներկայացվել ռեկտորին՝ ֆինանսավորման նպատակով: Ռեկտորի կողմից 2022թ.-ի հունիսի 1-ից ֆինանսավորման են ներկայացվել հետևյալ 2 թեմաները.

| № | ԱՄԲԻՈՆ | ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ | ԹԵՄԱ |
|---|---|---|---|
| 1. | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | Մարտիրոսյան Լևոն<br>(ղեկավար)<br>Սարգսյան Ռուդոլֆ<br>Աբրահամյան Վարդիթեր<br>Գրիգորյան Լիանա (աշխ. բակ. 2-րդ կուրս) | Արագածոտնի մարզի տարածքային-ռեկրեացիոն ներուժը և զբոսաշրջային ռեսուրսների գնահատումը |
| 2. | Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ | Մանուկյան Վարդան<br>(ղեկավար)<br>Նիկողոսյան Գագիկ<br>Սարգսյան Սամվել<br>(խորհրդատու) | Մաթեմատիկական և ֆիզիկական տրամաբանական, որակական, դիվերգենտ |

| | | | |
|---|---|---|---|
| | | Շահբազյան Անի (հայցորդ 1-ին կուրս) | խնդիրները որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց |

Խմբերի կողմից արդեն ներկայացվել են 1-ին ընթացիկ հաշվետվությունները, որոնք ներբուհական համապատասխան խորհուրդների կողմից գնահատվել են դրական: Վերոնշյալ թեմաների իրականացման մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ներբուհական դրամաշնորհի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, տեղադրված է ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջում:

2022թ.-ին ավարտվել է նաև ներբուհական դրամաշնորհի շրջանակում ներքոնշյալ թեմայի իրականացումը, որի համար ներկայացված ամփոփիչ հաշվետվությունը ներբուհական խորհրդի և Գիտական խորհրդի կողմից գնահատվել է դրական:

| № | ԱՄԲԻՈՆ | ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ | ԹԵՄԱ |
|---|---|---|---|
| 1. | Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ | Մանուկյան Վարդան /ղեկ.<br>Նիկողոսյան Գագիկ<br>Դրմեյան Հենրիկ<br>Սարուխանյան Ալվարդ | Ֆիզիկական և մաթեմատիկական ընտրովի խնդիրների իրացման բազմամակարդակային մոտեցումը որպես կրթական գործընթացի որակի բարձրացման միջոց |

Ստորև ներկայացված է ֆինանսավորվող թեմաների՝ ուսումնական գործընթացում արդյունքների ներդրման վերլուծությունը.

| № | Ամբիոն | Խմբի անդամներ | Ուղղություն, իրականացման ժամանակահատված | Ըստ օրացուցային պլանի հետազոտության արդյունքների ներդրում ուսումնական գործընթացում | Ըստ հաշվետվությունների հետազոտության արդյունքների ներդրում ուսումնական գործընթացում |
|---|---|---|---|---|---|
| **1.** | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | 1.Մարտիրոսյան Լևոն /ղեկ./<br>2.Սարգսյան Ռուդոլֆ<br>3.Գրիգորյան Անահիտ<br>4.Հարությունյան Քաջիկ | Գիտություն երկրի մասին, 01.03.2017 թ.-28.02.2019 թ. | Նախատեսված չէ | Ներդրված չէ |
| **2.** | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | 1.ԱդամյանՆելլի/ղեկ./<br>2.ԱվագյանԿարինե<br>3.Ամազարյան Աիդա<br>4.Միքայելյան Հռիփսիմե | Դասավանդման մեթոդիկա 01.03.2017 թ.-28.02.2018 թ. | Նախատեսված չէ | Ներդրված չէ |
| **3.** | Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ | 1.Սերոբյան Երվանդ /ղեկ./<br>2.Մանուկյան Վարդան<br>3.Սուլթանյան Խաչատուր<br>4.Խալիֆյան Լիլիթ | Դասավանդման մեթոդիկա, 01.03.2017 թ.-28.02.2019 թ. | Նախատեսված է | Ներդրված է. |
| **4.** | Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ | 1.Դրմեյան Հենրիկ /ղեկ./<br>2.Նազարյան Նունե<br>3. Մելքոնյան Արմեն<br>4.Հարոյան Տաթև | Դասավանդման մեթոդիկա, 27.03.2018թ.-26.03.2020 թ. | Նախատեսված չէ | Ներդրված չէ |
| **5.** | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | 1. Մարտիրոսյան Լևոն/ղեկ./<br>2. Սարգսյան Ռուդոլֆ<br>3. Աբրահամյան Վարդիթեր<br>4. Սարգսյան Հերմինե (10.05.2019-ից մինչև 10.09.2020)<br>Հակոբյան Աստղիկ (10.09.2020-ից մինչև 10.05.2021) | Աշխարհագրություն, զբոսաշրջություն, 10.05.2019-09.05.2021 | Նախատեսված է | Ներդրված է |
| 6. | Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ | 1. Մանուկյան Վարդան /ղեկ.<br>2. Նիկողոսյան Գագիկ<br>3. Դրմեյան Հենրիկ<br>4. Սարուխանյան Ալվարդ | Դասավանդման մեթոդիկա 01.10.2020թ-30.09.2022 թ. | Նախատեսված է | Ներդրված է |

Հարկ է նշել, որ ներբուհական դրամաշնորհային ծրագիրը նպաստում է գիտական գործունեության մեջ ուսանողների ներգրավվածության բարձրացմանը՝ միաժամանակ ապահովելով նրանց կողմից տպագրվող հոդվածների թվաքանակի աճը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՒՄ

| | Ուսանողների քանակ | Տպագրված հոդվածների քանակ /ուսանողների մասնակցությամբ/ |
|---|---|---|
| 2017 | 3 | 5 |
| 2018 | 4 | 3 |
| 2019 | 4 | 3 |
| 2020 | 3 | 2 |
| 2021 | 2 | 3 |
| 2022 | 3 | 0 |

## 6.5 ԳԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ /2018-2022 թթ/

| № | ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐ | ԹԵՄԱ | ԱՆԴԱՄՆԵՐ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՉԱՓ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|---|---|
| 1. | 2018 | Նանո և միկրոտեխնիկական նյութերի և կառուցվածքների մեխանիկական պրոբլեմների լաբորատորիայի պահպանում (բազային) | Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ | 2.802.600 |
| 2. | 2019 | Նանո և միկրոտեխնիկական նյութերի և կառուցվածքների մեխանիկական պրոբլեմների լաբորատորիայի պահպանում (բազային) | Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ | 3.418.900 |
| 3. | 2018-2020 | Ասիմետրիկ շերտավոր ամրավորումներ պարունակող պոլիմերային նանոկառուցվածքների առաձգական հատկությունների մոդելավորումը | Սարգսյան Արմենուհի Սարգսյան Սամվել Մարգարյան Լիլիթ Ժամակոչյան Քնարիկ | 9.000.000 |
| 4. | 2018-2020 | Միկրոպոլյար առաձգական | Սարգսյան | 8.400.000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | բարակ ձողերի, սալերի և թաղանթների՝ ըստ կայունության հաշվարկման հիմունքներ | Արմենուհի Սարգսյան Սամվել Ժամակոչյան Քնարիկ | |
| 5. | 2018-2020 | Նանո ոչ չափական կիսահաղորդչային ենթակառուցվածքներում ընդհատ վիճակների և կոհերենտ ոչ ստացիոնար օպտիկական երևույթների ուսումնասիրության մի քանի հարցեր | Նիկողոսյան Հրաչիկ Հարությունյան Սաշա Մանուկյան Վարդան Մովսիսյան Անի | 8.932.000 |
| 6. | 2018-2020 | Մաթեմատիկայի և ֆիզիկայի որոշ սկզբունքների կիրառումը հանրակրթության ոլորտում ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով | Սերոբյան Երվանդ Նիկողոսյան Գագիկ Մկրտչյան Գոհար Խալիֆյան Լիլիթ | 11.224.000 |
| 7. | 2020 | Նանո և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում (բազային) | Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ | 3.418.900 |
| 8. | 2021 | Նանո և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում (բազային) | Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ | 3.418.900 |
| 9. | 2021-2024 | Նանոնյութերի դեֆորմացիոն մոդելները՝ որպես մոմենտային առաձգականության տեսությամբ ճկուն սալեր և թաղանթներ | Սարգսյան Արմենուհի Սարգսյան Սամվել Ժամակոչյան Քնարիկ Խաչատրյան Մելինե | 16.800.000 |
| 10. | 2021-2024 | Ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական հիմնարար կապերի և առարկայական մեթոդների | Մանուկյան Վարդան Սերոբյան Երվանդ Նիկողոսյան | 16.755.000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վեր հանումը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց | Գագիկ Նազարյան Նունե | |
| 11. | 2022 | Նանո և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում (բազային) | Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ | 8.287.660 |

Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական նախագծերի թիվն աճել է նախորդ տարիների համեմատությամբ: 2018-2020 թթ.-ին իրականցվել են 5-ական ծրագրեր: Ընդ որում, հարկ է նշել, որ բոլոր նախագծերն իրականացվում են Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի ՊԴ կազմի կողմից:

Գիտության կոմիտեի կողմից ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Սարգսյանը մշտապես ընդգրկվել է առավել բարձր արդյունավետությամբ աշխատող մինչև 100 գիտաշխատողների ցուցակում՝ բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթի արդյունքներով:

## 6.6. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2022 թ.-ի ընթացքում կազմակերպվել են ՇՊՀ աշխատակիցների կողմից ներկայացված գիտական մենագրությունների և ուսումնամեթոդական աշխատանքների գրախոսման գործընթացները: Գրախոսման արդյունքները տրամադրվել են հեղինակներին՝ իրենց ներկայացրած աշխատանքներում անհրաժեշտ փոփոխություններ, լրացումներ կատարելու նպատակով: Աշխատանքների վերջնական

տարբերակները ներկայացվել են ՇՊՀ-ի Գիտական խորհրդին՝ տպագրության երաշխավորելու միջնորդությամբ:

## 2019-2022 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՐԱԽՈՍՈՒՄՆԵՐ

| № | ՀԵՂԻՆԱԿՆԵՐ | ԱՄԲԻՈՆ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐՆԱԳԻՐ | ԳՐԱԽՈՍՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ |
|---|---|---|---|---|
| **2022** | | | | |
| 1. | Գասպարյան Ա. | Պատմություն և փիլիսոփայություն | «Ազգային ինքնության հիմնախնդիրը հարավկովկասյան երկրներում» (դասախոսությունների նյութեր) | - |
| 2. | Ներսիսյան Ա. Դուրգարյան Է. | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | «Հայկական սփյուռքի աշխարհագրություն» ուսումնաօժանդակ ձեռնարկ, մեթոդական ցուցումներ (սեմինար և գործնական պարապմունքներ անցկացնելու համար) | Երաշխավորվել է տպագրության |
| 3. | Աղամյան Ն. | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | «Բուհում «Մասնագիտության դասավանդման մեթոդիկա» դասընթացների գործնական պարապմունքների մեթոդական ուղեցույց» | Երաշխավորվել է տպագրության |
| **2021** | | | | |
| 1. | Մարգարյան Լ. | Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ | SPSS համակարգչային փաթեթի որոշ կիրառություններ | Երաշխավորվել է տպագրության |
| 2. | Գրիգորյան Ն. | Մանկավարժություն | Երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման մանկավարժական միջոցներն ու մեթոդները | Երաշխավորվել է տպագրության |
| 2020 | | | | |
| 1. | Սարգսյան Ռ. | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | Գեոմորֆոլոգիական մեթոդները և ԱՏՀ (GIS) տեխնոլոգիաները ձևակառուցվածքային հետազոտություններում | Երաշխավորվել է տպագրության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Հայրապետյան Գ.<br>Սարգսյան Ս.<br>Մաթոսյան Ն. | Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ | «Հանրահաշվական և տրանսցենդենտ հավասարումների մոտավոր լուծման մեթոդները (համակարգչային պրակտիկում)» ուսումնամեթոդական ձեռնարկ | Երաշխավորվել է տպագրության |
| 3. | Աղանյան Գ. | Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա | «Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները մարմնամարզության օրինակով» մենագրություն | Երաշխավորվել է տպագրության |
| 4. | Նիկողոսյան Գ.<br>Սերոբյան Ե.<br>Մկրտչյան Գ. | Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ | Մաթեմատիկայի և ֆիզիկայի ձեռնարկ. սովորողների և սովորեցնողների համար | Երաշխավորվել է տպագրության |
| 5. | Խաչատրյան Հ. | Գործարարություն և վարչարարություն | Տնտեսագիտություն (մեթոդական ցուցումներ ոչ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար) | Երաշխավորվել է տպագրության |
| 2019 | | | | |
| 1. | Միքաելյան Լ. | Մանկավարժություն | Տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիաները բուհում | Չի երաշխավորվել տպագրության |
| 2. | Մարգարյան Ա. | Արվեստ | Համաշխարհային կերպարվեստի պատմության համառոտ ձեռնարկ | Չի երաշխավորվել տպագրության |

ՇՊՀ-ն թեկնածուական տարբեր թեզերի համար ներկայանում է որպես առաջատար կազմակերպություն: Ներկայացնենք վերջին 4 տարիների տվյալները:

**2019-2022 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՈՒՄՆԵՐ**

| № | ՀԵՂԻՆԱԿ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ | ՇՊՀ ԱՄԲԻՈՆ, ՈՐՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԳՐԱԽՈՍՈՒՄԸ | ԳՐԱԽՈՍՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ |
|---|---|---|---|---|
| 2022 | | | | |
| 1. | Ենգոյան Լ. Ա. | ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ | Հայոց լեզու և գրականություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 2. | Սիմոնյան Ա.Ս. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 3. | Մկրտումյան Ա.Ս. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 4. | Մելիքյան Լ. Գ. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Հոգեբանություն և սոցիոլոգիա | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 5. | Մկրտչյան Վ.Ջ. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 6. | Կարապետյան Ս.Մ. | Երևանի պետական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 2021 | | | | |
| 1. | Հակոբյան Ֆ. Հ. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Հարթենյան Ջ.Գ. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 3. | Բուկուշյան Ն. Ա. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Անգլերեն լեզու և գրականություն, Ռուսաց լեզու և գրականություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 4. | Թոռունյան Ն. Ա. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Հայոց լեզու և գրականություն, Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 5. | Ղարիբյան Ռ. Գ. | Երևանի պետական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 6. | Գրիգորյան Մ. Ա. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 2020 | | | | |
| 1. | Օհանյան Լ.Ա. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 2. | Մինասյան Ա.Ի. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 3. | Փահլևանյան Ս. Վ. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 2019 | | | | |
| 1. | Ավանեսյան Լ.Ս. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ, Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |
| 2. | Գրիգորյան Գ.Ֆ. | Հայկական պետական մանկավարժական համալսարան | Մանկավարժություն | Որոշ նկատառումներով հանդերձ՝ կարծիքը դրական է |

## 2021 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՐԱԽՈՍՈՒՄ

| № | ՀԵՂԻՆԱԿ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ | ՇՊՀ ԱՄԲԻՈՆ, ՈՐՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԳՐԱԽՈՍՈՒՄԸ | ԳՐԱԽՈՍՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ |
|---|---|---|---|---|
| 2021 | | | | |
| 1. | Մովսիսյան Կ. Հ. | Գորիսի պետական համալսարան | Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ | կարծիքը դրական է |

## 2021 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԽՈՍՈՒՄ

| № | ՀԵՂԻՆԱԿ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ | ՇՊՀ ԱԲԻՈՆ, ՈՐՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԳՐԱԽՈՍՈՒՄԸ | ԳՐԱԽՈՍՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ |
|---|---|---|---|---|
| 2021 | | | | |
| 1. | Շահվերդյան Թ. | Վանաձորի պետական համալսարան | Հայոց լեզու և գրականություն | կարծիքը դրական է |

# 7.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

## 7.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են միայն շենքերի շահագործման և պաշտպանության հետ կապված ընթացիկ նորոգումներ, կապիտալ շինարարական աշխատանքներ չեն կատարվել:

ՇՊՀ հիմնադրամի հաշվեկշռում գտնվող շենք - շինությունները.

| № | Շենք-շինությունների | |
|---|---|---|
| | Օգտագործման նպատակային նշանակությունը | Հասցեն |
| 1 | ՇՊՀ-ի գլխավոր մասնաշենք | ք. Գյումրի՝ փող. Պ. Սևակի 4 |
| 2 | Տեղակայված է ՇՊՀ-ի Ռազմական ամբիոնը | ք. Գյումրի՝ փող. Շիրակացու 21/5 |
| 3 | Տեղակայված է ՇՊՀ-ի քոլեջը | ք. Գյումրի՝ փող. Շիրակացու 21/5 |
| 4 | Տեղակայված է ՇՊՀ-ի ավագ դպրոցը | ք. Գյումրի՝ փող. Թումանյան 85 |
| 5 | ՀՀ ԿԳՄՍ նախարարության համաձայնությամբ անվարձահատույց, տեղակայված է Գյումրու Ակադեմիական վարժարանը | ք. Գյումրի՝ փող. Վ. Սարգսյան 26 |
| 6 | ՀՀ ԿԳՄՍ նախարարության համաձայնությամբ անվարձահատույց, տեղակայված է Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոցը | ք. Գյումրի՝ փող. Իսահակյան 4 գ |
| 7 | Անգար (պահեստային տարածք) | ք. Գյումրի՝ փող. Գերցենի 3 |
| 8 | ՇՊՀ քոլեջի նախկին մասնաշենք, սպորտդահլիճ, կաթսայատուն | ք. Գյումրի՝ փող. Վ. Սարգսյան 28, 28/1, 28/2 |

## 7.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համալսարանի ընդհանուր համակարգչային տեխնիկական հագեցվածությունը կազմում է.

| № | Տեխնիկական սարքավորումներ | Քանակ |
|---|---|---|
| 1 | Դյուրակիր համակարգիչ (պլանշետ, նոթբուք) | 113 |
| 2 | Տպիչ | 109 |
| 3 | Պրոյեկտոր | 12 |
| 4 | Ինտերակտիվ պրոյեկտոր | 5 |
| 5 | Լուսանկարչական ապարատ | 4 |
| 6 | Ռաուտեր | 7 |
| 7 | Տեսախցիկ | 7 |
| 8 | Հեռուստակոնֆերանսի համակարգ | 1 |
| 9 | Ուժեղացուցիչ | 7 |
| 10 | Մոնիտոր | 264 |
| 11 | Համակարգիչ | 264 |

Բուհի համակարգչային ռեսուրսները հիմնականում բավարարում են ժամանակակից տեխնիկական պահանջներին:

Բուհի սպորտդահլիճը հագեցված է ժամանակակից սպորտային սարքավորումներով.

| № | Սպորտային սարքավորումներ | Քանակ |
|---|---|---|
| 1 | ուժային մարզասարք | 1 |
| 2 | վազքուղի մարզասարք | 2 |
| 3 | հեծանիվ մարզասարք | 1 |
| 4 | սպորտային հեծանիվներ | 15 |
| 5 | թենիսի սեղան | 4 |

## 7.3. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին համալսարանի գրքային ֆոնդը կազմված է եղել 65.167 միավոր գրականությունից, որից՝ 61.154 միավոր գիրք, 2966 միավոր՝ պարբերական հրատարակություն և 1047 միավոր՝ ատենախոսության սեղմագիր:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի գրադարանային պաշարներում համալարված գրքերի պատկերն այսպիսին է՝

**Անուն՝** 84

**Միավոր՝** 222

**Նվիրատվության կարգով ստացվել է՝**

**Անուն՝** 60

**Միավոր՝** 98

**Փոխարինման կարգով ստացվել է՝**

**Անուն՝** 9

**Միավոր՝** 9

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի գրքային ֆոնդը համալրվել է 232 միավոր գրականությամբ, որից 186 միավորը՝ հայալեզու, 33 միավորը՝ ռուսալեզու, և 13 միավորը՝ անգլերեն պարբերական հրատարակություն:

# 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 8.1. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022 հաշվետու ուստարում Շիրակի պետական համալսարանն աշխատանքներ է իրականացրել հասարակայնության հետ կապերի և լրատվության, հասարակության լայն շրջաններում բուհի գործունեության մասին տեղեկատվության տարածման, հասարակական դրական կարծիքի և բարձր վարկանիշի ձևավորման ուղղությամբ՝ ապահովելով համալսարանի հաշվետվողականությունը պետության և հասարակության առջև:

Վերոնշյալ աշխատանքները կազմակերպվում են հասարակայնության հետ կապերի և լրատվության ոլորտի մասնագետների կողմից՝ համապատասխան մեդիագործիքների և տեխնիկասարքավորումների միջոցով: Բուհը ստեղծել է արտաքին շահառուների հետ կապի ամրապնդման և նրանց հուզող հարցերին սպառիչ պատասխան տալու բոլոր հնարավորությունները:

Համալսարանի գործունեության մասին տեղեկատվությունն առավելագույնս հասանելի ու թափանցիկ կերպով ներկայացվել է հայտարարությունների, ռեպորտաժների և ուղիղ հեռարձակման ձևաչափով:

Հաշվետու ուստարում հասարակայնության հետ կապերի և լրատվության ուղղությամբ աշխատանքներն ընթացել են ներքին և արտաքին հաղորդակցության, ՇՊՀ-ին վերաբերող հրապարակումների վերլուծության, բուհի վարկանիշի բարձրացման, տեսանյութերի պատրաստման և հեռարձակման, համացանցային տիրույթում ՇՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման, սոցիալական ցանցերում ՇՊՀ-ի էջերի վարման և համապատասխան տեղեկատվության տարածման, ինչպես նաև լրագրության բաժնի ուսանողների մասնագիտական-գործնական հմտությունների ուսուցման և մի շարք այլ ուղղություններով:

«Համալսարանական լրագիր» հաղորդաշարի շրջանակներում հաշվետու ուստարում 37 տեղեկատվական ռեպորտաժ և գովազդային հոլովակ է պատրաստվել և տարածվել մեդիահարթակներում, ինչը նախորդ տարվա հաշվետու ժամանակաշրջանի

համեմատ ավելացել է 17-ով: Տեսանյութերի թվի աճը պայմանավորված է կազմակերպված միջոցառումների տեսաֆիլմերի պատրաստման գործում ավելի մեծ թվով ուսանողների ակտիվ ընդգրկվածությամբ:

Հաշվետու ուսումնական տարում բուհի պաշտոնական կայքէջում և սոցիալական հարթակներում լուսաբանվել է 143 միջոցառում՝ ֆոտոռեպորտաժների և հոդվածների ձևաչափով: Անդրադարձ է կատարվել նաև բուհի ավագ դպրոցի և քոլեջի աշխատանքների ու միջոցառումների լուսաբանմանը https://bit.ly/3ZwKTkq, https://bit.ly/3ZwpPuE:

2021-2022 ուստարում է անցկացվել ՇՊՀ-ի ռեկտորի ընտրությունը: Համալսարանն ապահովել է Հոգաբարձուների խորհրդի՝ ռեկտորի ընտրության նիստի 2,5 ժամ տևած ուղիղ հեռարձակումը համալսարանի յութուբյան և ֆեյսբուքյան էջերով, իսկ առավել հասանելիություն ապահովելու համար՝ ընտրության օրվանից 5 օր առաջ հեռարձակման հղումը՝ ամենօրյա թարմացումներով, տեղադրվել է բուհի մեդիահարթակներում:

Ըստ ընդունելության քննությունների անցկացման կանոնակարգի՝ ներբուհական քննությունների անաչառություն ապահովելու նպատակով կատարվել է քննությունների ամբողջական տեսանկարահանում՝ 1440 րոպե տևողությամբ:

Լուսաբանված նյութերի մեջ տեղ են գտել նաև դեսպանների, պատգամավորների, փոխնախարարի, Շիրակի մարզպետի և այլ պաշտոնյաների՝ Շիրակի պետական համալսարան կատարած այցի մասին պատմող ռեպորտաժները – https://bit.ly/3GZ74ss, https://bit.ly/3wfW5F3, https://bit.ly/3CJMGZY, https://bit.ly/3IMEzQd, https://bit.ly/3CGIBpg:

2021-2022 ուստարվա ընթացքում մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվել են Շիրակի մարզի դպրոցներում անցկացված հանդիպումները, ինչպես նաև ՇՊՀ-ում կազմակերպված «Բաց դռների օր» և «Ամառային դպրոց» նախաձեռնությունները՝ ապահովելով նաև դրանց լուսաբանումը https://bit.ly/3kb1cDy, https://bit.ly/3X39UC9, https://bit.ly/3Guj5oi, https://bit.ly/3IIqJ15, https://bit.ly/3iqgP9O, https://bit.ly/3Qvn8W4:

Հաշվետու ուստարվա ընթացքում ընդունելության և բուհում կազմակերպված մրցույթների մասին հայտարարություններն առավել մեծ լսարանի հասանելի

դարձնելու համար դրանք տեղադրվել են նաև հանրապետական մամուլում և հեռարձակվել մարզային հեռուստատեսությամբ:

Ամենօրյա գրաֆիկով լուսաբանվել է ՇՊՀ-ում կազմակերպված ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ընթացքը https://bit.ly/3GC4B5W, https://bit.ly/3W47lP9, https://bit.ly/3w359wx, https://bit.ly/3W9IXLY:

Լուսաբանումներում մեծ թիվ են կազմել ինչպես հայաստանյան գործընկերների հետ կազմակերպված, այնպես էլ Էրազմուս+ ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումների ու վերապատրաստումների մասին պատմող ռեպորտաժները https://bit.ly/3k9804H, https://bit.ly/3k84aIU, https://bit.ly/3vUACBa, https://bit.ly/3Wkkvb3, https://bit.ly/3CGQrz0:

Ուսումնասիրված նյութերի 21,6%-ը հեռուստատեսային թողարկումներն են, որոնք մեծ մասամբ ներկայացնում են բուհի գործունեությունը՝ նպաստելով նաև համալսարանի մասին դրական կարծիքի ձևավորմանը:

Լրահոսի մոտ 78,4%-ը տպագիր և էլեկտրոնային հրապարակումներն են, որոնք ներկայացնում են բուհի գործունեության մասին տեղեկատվություն, անդրադառնում են նաև բուհում առկա խնդիրներին:

Էլեկտրոնային հրապարակումների 16,2 %-ը բուհի խնդիրների մասին է, որոնք ներկայացվել են բուհի աշխատակիցների կողմից:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության ուղղությամբ կատարված աշխատանքներից է նաև լրագրության բաժնի ուսանողների գործնական պարապմունքների կազմակերպումը: Ուսանողները պրակտիկայի շրջանակում ստացած գործնական հմտությունների և տեսական գիտելիքների համադրմամբ վարել են հարցազրույցներ, պատրաստել ռեպորտաժներ:

Ուսանողների պատրաստած հեռուստառեպորտաժները ներկայացնում ենք հղումներով.

1. https://bit.ly/3iSNtk4
2. https://bit.ly/3Pizdgu
3. https://bit.ly/3YcXQ2h
4. https://bit.ly/3v0WpXD
5. https://bit.ly/3BB6NZw

2021-2022 ուստարում ՇՊՀ - ի պաշտոնական կայքէջում տեղադրվել է 382 էջ նոր տեղեկատվություն (հայտարարություններ), ստեղծվել 336 նոր էջ։ Իսկ ՇՊՀ-ի էլեկտրոնային գրադարանի կայքում տեղադրվել է 95 էլեկտրոնային գիրք https://library.shsu.am/






ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջում տեղադրվել են նաև Էրազմուս+ «Շրջանավարտների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ներդրում Հայաստանի և Մոլդովայի բարձրագույն կրթության համակարգերում»-WBL4JOB ծրագրի շրջանակներում 11 տեղեկատվական նյութ և Էրազմուս+ «Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով»-SMARTI ծրագրի շրջանակներում 12 նյութ, որից 4-ը՝ որպես հայտարարություն, իսկ 8-ը՝ տեղեկատվություն:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի պաշտոնական էջերը ակտիվ գործել են սոցիալական կայքերում՝ Facebook, Instagram, YouTube, Twitter, LinkedIn՝ ներկայացնելով կրթական, գիտական և մշակութային անցուդարձը, ներքին և արտաքին շահառուների համար նախատեսված տեղեկատվությունը:

2021-2022 ուստարում գործարկվել է նաև ՇՊՀ-ի Telegram հարթակը: Ելնելով ալիքի առանձնահատկություններից՝ այստեղ տեղադրվում են միայն հայտարարություններ:

Հաշվետու ուստարում զգալի թվով ավելացել է նաև սոցիալական կայքերում հետևորդների թիվը. Facebook՝ 9786 հետևորդ, Instagram՝ 3489 հետևորդ, YouTube՝ 398 հետևորդ, Telegram՝ 145 հետևորդ:

**Մեդիաուսումնասիրությունների արդյունքները**

| Գործունեության տեսակ/տարի | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|
| ՇՊՀ-ի մասին ինտերնետային կայքերում և տպագիր մամուլում հրապարակված նյութերի քանակ | 57 | 92 | 74 |
| ՇՊՀ-ի մասին հեռուստառադիո ընկերություններով եթեր հեռարձակված տեսանյութերի քանակ | 6 | 7 | 16 |
| Լուսանկարահանված միջոցառումների | 27 | 88 | 143 |

| | | | |
|---|---|---|---|
| քանակ | | | |
| Տեսանկարահանված միջոցառումների քանակ | 23 | 25 | 37 |
| Միջոցառումների տեսանկարահանման տևողություն (րոպեներով) | 67.5 | 110.13 | 312 |
| Facebook-յան իրադարձությունների (event) քանակ | 3 | 4 | 10 |
| Facebook-ով ստացված հաղորդագրությունների քանակ | 825 | 384 | 522 |
| Instagram-ով ստացված հաղորդագրությունների քանակ | 1172 | 768 | 1037 |
| Ռեկտորի ուղերձների քանակ | 10 | 11 | 12 |

Վերջին տարիներին հետադարձ կապի մեխանիզմների մշակումը, ներդրումն ու առցանց գործիքակազմի կիրառումը զգալիորեն բարելավել են արտաքին և ներքին շահառուների կապը բուհի հետ, որը փաստում է սոցիալական ցանցերի միջոցով ստացված հաղորդագրությունների վիճակագրությունը:

Ըստ վիճակագրության՝ հետադարձ կապի ապահովման ամենաարդյունավետ միջոցը շարունակում է մնալ Instagram սոցիալական կայքը: Վերջին երեք տարում այս հարթակում հաղորդագրությունների միջոցով ուսանողներից, շրջանավարտներից, դիմորդներից և այլ շահակիցներից ստացված հարցերը կրկնակի աճել են Facebook-ի հետ համեմատությամբ:




Հետադարձ կապի վերոնշյալ մեխանիզմից ներքին և արտաքին շահառուների բավարարվածությունը կամ դժգոհությունը պարզելու նպատակով պարբերաբար հարցումներ են իրականացվում շահառուների հետ: Ներկայացնում ենք ամենաարդյունավետ հետադարձ կապ ապահոված Instagram սոցիալական կայքում հարցումների արդյունքները:

1. Հարցմանը մասնակցել է 292 հետևորդ:



2. Հարցմանը մասնակցել է 328 հետևորդ:




3. Հարցմանը մասնակցել է 346 հետևորդ:




4. Հարցմանը մասնակցել է 329 հետևորդ:



Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի Կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվող հարցումներից ելնելով՝ կարող ենք փաստել, որ հաշվետու տարում ևս ներքին և արտաքին շահառուների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները լիարժեքորեն գործել են, շահառուների հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ։

**Սոցիալական ցանցերի էջերում գրանցած ցուցանիշներ**

**Facebook**

- Գրառումների քանակ- 424
- Ամենաշատ դիտումներ ունեցող տեսանյութ- 74,500
- Տեսանյութերի դիտելիության միջին ցուցանիշ- 3700

**Instagram**

- Գրառումների քանակ- 188
- Սթորիների քանակ-997
- Սթորի բաժնում անցկացված հարցումների քանակ-8
- Տրված հարցեր-160

Բուհի գործունեության մասին հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնը Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի հետ համատեղ աշխատանքներ է իրականացրել։ «Սոցիոլոգիա» մասնագիտության ուսանողները հետազոտություն են իրականացրել հեռավար հարցման ձևաչափով։ Ըստ հարցման արդյունքների՝ մասնակիցների ճնշող մեծամասնությունը դրական կարծիք ունի բուհի մասին և խորհուրդ է տալիս  ընտրել Շիրակի պետական համալսարանը։ Շիրակի պետական համալսարանը նախընտրելու առավել բարձր ցուցիչներ են համարվել դասախոսական կազմի պատրաստվածությունը, մատչելի վարձավճարները, ինչպես նաև բնակության վայրին մոտ գտնվելն ու ֆինանսական միջոցների խնայողությունը, իսկ այլ բուհերում ուսումնառելու հիմնական ցուցիչը նշել են «մայրաքաղաքային միջավայրը»։

## 8.2. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Արհեստակցական միությունը համալսարանի աշխատողների կամավոր միավորում է, որը ստեղծվել է նրանց գործունեությունը համակարգելու, աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու, պաշտպանելու համար:

Արհեստակցական միության գործունեության հիմնական ուղղություններն են.

1. մասնակցել գործատուի կողմից Արհեստակցական միության անդամների աշխատանքային, սոցիալ-տնտեսական և իրավական շահերը շոշափող կանոնակարգերի մշակման աշխատանքներին,
2. ՀՀ օրենսդրությանը համապատասխան վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը,
3. հանդես գալ ներբուհական կյանքին վերաբերող նախաձեռնություններով՝ նպատակ ունենալով բարելավելու ՇՊՀ-ի աշխատակիցների սոցիալական վիճակն ու պայմանները:

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ի Արհեստակցական միության աշխատանքները կրել են առավելապես սոցիալական բնույթ: 2021-2022 հաշվետու ուսումնական տարում Արհեստակցական միությունը կազմակերպել և անցկացրել է տարբեր տեսակի ու բնույթի միջոցառումներ՝ նվիրված Մեծ Հաղթանակին, Եղեռնին, Դեկտեմբերի 7-ին, Մայրության և գեղեցկության տոնին, Ամանորին:

Արհեստակցական կազմակերպությունն ունի 169 անդամ:

Հաշվետու ժամանակահատվածում Արհեստակցական միությունն իր ֆինանսական միջոցներից՝

- սոցիալապես անապահով անդամներին հատկացրել է 920.000 (ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,
- համալսարանում կազմակերպվող միջոցառումների համար հատկացրել է 1.414.000 (մեկ միլիոն չորս հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ:

Ամանորի և Սուրբծննդյան տոների կապակցությամբ Արհեստակցական միությունն իր ֆինանսական միջոցների հաշվին ամանորյա նվերներ և մանկական ներկայացումների տոմսեր է բաժանել միության անդամներին, ինչպես նաև կազմակերպել է համալսարանում ամանորյա միջոցառում-հյուրասիրություն:

Արհեստակցական միության ֆինանսական միջոցները գոյանում են անդամավճարներից: Կազմակերպությունը չունի վճարվող աշխատակից. նախագահը գործում է հասարակական հիմունքներով, առանց աշխատավարձի: Ֆինանսական ողջ միջոցները հատկացվում են կոլեկտիվի սոցիալ-տնտեսական խնդիրներին, մշակութային միջոցառումների կազամակերպմանը, ֆինանսական անհատական օգնությունների և աջակցությունների տրամադրմանը:

Արհեստակցական կազմակերպության գործունեությունը թափանցիկ և հասանելի է բոլորին: ՇՊՀ-ի Արհեսատակցական միությունը գործել և գործում է «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ Արհեսատակցական միությունների մասին օրենքի» և «ՇՊՀ-ի Արհեստակցական կազմակերպության կանոնադրության» և «ՇՊՀ–ի արհեստակցական միության կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Արհեստակցական միության ֆինանսական ծախսերի և գործողությունների հաշվետվությունները տեղադրված են համալսարանի կայքում:

**2020-2022 թթ. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

**/հազար ՀՀ դրամներով/**



# 9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի (այսուհետ՝ ԱՀՀՀԿ Կենտրոն)՝ 2021-2022 ուստարում իրականացված աշխատանքների հիմնական ուղղությունները եղել են՝

ա/ բուհերի կարողությունների զարգացմանն ուղղված միջազգային համագործակցության ծրագրեր, դրանց ընթացիկ արդյունքների ամփոփում, մշտադիտարկման (մոնիտորինգի) անցկացում,

բ/ բուհերի աշխատակիցների և ուսանողների ակադեմիական շարժունությանն ու փոխանակումներին ուղղված միջազգային համագործակցության ծրագրեր,

գ/ ՇՊՀ-ի արտաքին շահառուների համար իրականացվող վերապատրաստման ծրագրեր,

դ/ ՀՀ և արտասահմանյան բուհերի, այլ կազմակերպությունների հետ համագործակցություն, նոր պայմանագրերի կնքում,

ե/ հասարակայնության հետ կապեր և լրատվություն, հետադարձ կապի ապահովում, պաշտոնական կայքէջի լրամշակման, թարգմանության իրականացում,

զ/ մասնակցություն ՇՊՀ-ի ինքնավերլուծության և հավատարմագրման աշխատանքներին:

## 9.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

**Համալսարանը 2021-2022 ուստարում Եվրամիության Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում իրականացրել է բուհերի կարողությունների զարգացմանը միտված 2 ծրագիր՝ WBL4JOB և SMARTI:**

WBL 4 J O B

## ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
## (2020-2024թթ.)

**Ծրագրի նպատակն է՝**

Կրթական քաղաքականության, իրավական դաշտի և դուալ բարձրագույն կրթության (ԴԲԿ) ընդհանրական ու ճկուն մոդելի մշակման և ներդրման միջոցով խթանել ձեռնարկությունների և բուհերի միջև համագործակցությունը, բարձրացնել շրջանավարտների աշխատունակությունն ու մրցունակությունը՝ վերջնական նպատակ ունենալով ներդնել աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը (ԱՀՈՒ) Հայաստանում և Մոլդովայում Home (wbl4job.com):

Այս նպատակի իրականացման համար նախատեսվում է անցկացնել մասնակից կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստումներ ՀՀ և արտասահմանյան գործընկեր համալսարաններում, ինչպես նաև համակարգչային անհրաժեշտ գույքի, ծրագրերի և գրականության ձեռքբերում https://bit.ly/3W74CEB, https://bit.ly/3jYtfG3:

**Որպես WBL4JOB ծրագրի երկարաժամկետ վերջնարդյունքներ**՝ նախատեսվում է ունենալ հետևյալը.

- ✓ ԱՀՈՒ/ԴԲԿ քաղաքականության և իրականացման գործիքակազմ,
- ✓ ԱՀՈՒ/ԴԲԿ քաղաքականության, կառուցակարգերի և գործիքների գծով վերապատրաստված անձնակազմ,
- ✓ ԱՀՈՒ/ԴԲԿ շրջանակում դասավանդման և ուսումնառության գծով վերապատրաստված դասախոսական անձնակազմ/մենտոր,
- ✓ Բարձրագույն կրթության համակարգերում ԱՀՈՒ/ԴԲԿ-ի ներդրմանն անհրաժեշտ ազգային քաղաքականություն,
- ✓ ԱՀՈՒ/Դուալ բարձրագույն կրթության ընդհանրական ու ճկուն մոդել՝ ներառյալ դուալ կրթությամբ «Բանկային գործ և ապահովագրություն» մասնագիտության բակալավրիատի ավարտական տարվա կրթական ծրագիր,
- ✓ ԱՀՈՒ/ԴԲԿ ներդրմանն անհրաժեշտ փոփոխություններ ազգային օրենսդրություններում,

- ✓ Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ՝ մասնակից 4 համալսարանների համար,
- ✓ Համագործակցության համաձայնագրեր՝ ծրագրի իրականացման ավարտից հետո:

Էրազմուս+ WBL4JOB ծրագրի շրջանակներում առաջին մոնիթորինգային այցը Շիրակի պետական համալսարանում տեղի ունեցավ 2021թ. հոկտեմբերի 21-ին ծրագրի համակարգող՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանի արտաքին կապերի և որակի ապահովման գծով պրոռեկտոր Արայիկ Նավոյանի և Եվրոպական ծրագրերի համակարգող Գոհար Ղալաչյանի կողմից: Քննարկվեցին միջազգային ծրագրի մանրամասները, ծրագրով նախատեսված հետագա անելիքները, նաև բարձրագույն կրթության համակարգում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ներդրման հայեցակարգի և բարձրագույն դուալ կրթության ուղեցույցի նախնական տարբերակները՝ վերջնական նպատակ ունենալով ներդնել աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը (ԱՀՈՒ) Հայաստանում:

2021թ. հոկտեմբերի 29-31-ը Էրազմուս+ WBL4JOB ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ ազգային աշխատաժողով՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցման իրականացման ազգային քաղաքականության և բարձրագույն դուալ կրթության վերաբերյալ: Աշխատաժողովին մասնակցում էին ծրագրի կոնսորցիումի անդամներ՝ Հայաստանում Ֆրանսիական համալսարանի, Շիրակի պետական համալսարանի, Հայաստանի բանկերի միության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչները:

Աշխատաժողովի մասնակիցներին ներկայացվեցին «2024-2030թթ.-ի համար բարձրագույն կրթության համակարգում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ներդրման հայեցակարգի և աշխատանքային քարտեզի» և «Բարձրագույն դուալ կրթության ուղեցույցի» նախնական տարբերակները:

Էրազմուս+ WBL4JOB ծրագրի մոնիթորինգ է անցկացրել նաև Էրազմուս+ ազգային գրասենյակը, որը տեղի է ունեցել 2021թ. նոյեմբերի 19-ին առցանց:

2021թ. նոյեմբերի 23-ին ծրագրի՝ ՇՊՀ-ի աշխատակազմը հանդիպում ունեցավ «Կառավարում» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների հետ, ովքեր իրենց ուսումնառության վերջին կուրսում մասնակցելու են աշխատանքի վրա հիմնված ուսուցման պիլոտային ծրագրին WBL4JOB ծրագրի շրջանակներում: Այն ենթադրում է

լսարանում իրենց ստացած տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների ու կարողությունների ձեռքբերում տարբեր բանկերի Գյումրու մասնաճյուղերում՝ ավելի երկար ժամանակահատվածով, քան նախատեսված է պրակտիկայի համար:

2021թ. նոյեմբերի 24-ին ՇՊՀ-ում անցկացվեց աշխատանքային հերթական հանդիպումը ծրագրի համակարգող, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի ռեկտոր Բերտրան Վենարի և արտաքին կապերի ու որակի գծով պրոռեկտոր Արային Նավոյանի ղեկավարությամբ:

Երկու համալսարանների ռեկտորները ստորագրեցին ծրագրով ՇՊՀ-ի համար հատկացված զույքի մի մասի ընդունման փաստաթղթերը:

Ավելի ուշ կայացած հանդիպում-քննարկմանը մասնակցում էին Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Շիրակի պետական համալսարանի աշխատանքային թիմի անդամները և **ԱԿԲԱ, ԱյԴի, Ամերիա, Ինեկո** բանկերի Գյումրու մասնաճյուղերի կառավարիչները՝ նպատակ ունենալով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կազմակերպման ուղեցույցի նախնական տարբերակի քննարկումն ու 2022-23 ուստարում ՇՊՀ-ի «Կառավարում (բանկային գործ և ապահովագրություն)» կրթական ծրագրում դրա ներդրումը:

2021թ. դեկտեմբերի 16-ին Շիրակի պետական համալսարանում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում Գյումրիում գործող բանկերի մասնաճյուղերի ներկայացուցիչների հետ՝ կայանալիք պիլոտային ծրագրի մանրամասները քննարկելու նպատակով:

Աշխատանքային հանդիպմանը մասնակցում էին ծրագրի՝ ՇՊՀ-ի աշխատանքային խումբը, ինչպես նաև ԱյԴի բանկի, Ինեկոբանկի, Ամերիա բանկի և ԱԿԲԱ բանկի Գյումրու մասնաճյուղերի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկեցին և ներկայացրին առաջարկներ «Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կազմակերպման» ուղեցույցի և համապատասխան ուսումնական պլանի նախնական տարբերակի վերաբերյալ, որոնք պետք է կարգավորեն ԱՀՈւ կազմակերպումը բուհում և աշխատավայրում:

2022թ. մարտի 27-ից ապրիլի 1-ը Ֆրանսիայի Ստրասբուրգի և Ժան Մուլեն Լիոն 3 համալսարաններում կայացել է կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստում, որին մասնակցել է նաև WBL4JOB աշխատանքային թիմը:

2022թ. ապրիլի 19-ին ՇՊՀ-ում տեղի ունեցավ աշխատաժողով՝ ծրագրի շրջանակներում մշակված «Դուալ բարձրագույն կրթության կազմակերպման ուղեցույցն» ամփոփելու և հաստատելու նպատակով:

Աշխատաժողովին մասնակցում էին ծրագրի ՇՊՀ թիմի, ծրագրի համակարգող՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Հայաստանի բանկերի միության և ծրագրի գործընկեր բանկերի ներկայացուցիչները: Ներկայացվեցին «Դուալ բարձրագույն կրթության կազմակերպման ուղեցույցի» ՇՊՀ տարբերակը, «Կառավարում» (ըստ ոլորտի) մասնագիտության ուսումնական պլանը, ինչպես նաև բուհի, ուսանողի և բանկերի միջև կնքվող եռակողմ համաձայնագիրը:

Քննարկման արդյունքում ամփոփվեց ուղեցույցի վերջնական տարբերակը, որը պետք է հաստատվեր ՇՊՀ –ի Գիտական խորհրդի կողմից:

2022թ. հունիսի 29-ին կայացած հանդիպմանը առկա և հեռավար եղանակով մասնակցում էին ծրագրի շահառու կողմերի՝ ՇՊՀ-ի, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի և գործընկեր բանկերի ներկայացուցիչները: Աշխատանքային հանդիպման ընթացքում ներկայացվեց աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման ժամանակացույցը, ինչպես նաև ՇՊՀ-ի Գիտական խորհրդի կողմից հաստատված ուղեցույցը:

Մշակվել և ՇՊՀ-ի Գիտական խորհրդի կողմից ընդունվել է Դուալ բարձրագույն կրթության կազմակերպման ուղեցույցը, որը տեղադրված է նաև ՇՊՀ-ի կայքէջում:

Բուհի կողմից որպես համաֆինանսավորում՝ մշակվել և տպագրվել են ծրագրի աշխատանքային թղթապանակը, տեղեկատվական պաստառը և բրոշյուրը:

Էրազմուս+ WBL4JOB ծրագրի առանձնահատկություններից էր ՇՊՀ-ի ուսանողների, աշխատակիցների անձնական կարողությունների ու հմտությունների զարգացման միջոցով որոշակի փոփոխություններ կատարել ինչպես բուհ-գործատու համագործակցության շրջանակների ընդլայնման ու բազմազանեցման ոլորտում, այնպես էլ դրա իրականացման ձևաչափի ու բովանդակության մասին ունեցած նրանց պատկերացումներում: Այսինքն՝ մի կողմից բանկային համակարգի գործընկերներն

ակտիվ ներգրավվեցին ու համագործակցեցին ՇՊՀ-ի մասնագետների հետ «Կառավարում» մասնագիտության ուսումնական պլանի լրամշակման ու ավելի կիրառական դարձնելու, ուսանողներին բանկերում ընդունելու և աշխատանք տրամադրելու նպատակով ընտրության մրցույթի չափորոշիչների ու չափանիշների մշակման գործընթացներում, մյուս կողմից ՇՊՀ-ի ուսանողները հմտացան մոտիվացիոն նամակ գրելու, դրանք հարցազրույցի ժամանակ ներկայացնելու, բանկում ավելի լայն շրջանակի աշխատանքներ իրականացնելու հարցերում: Այս ամենի շնորհիվ, ինչպես նաև ըստ ծրագրով նախատեսված գործողությունների՝ մեր ուսանողների կարգավիճակը բանկերում հավասարեցվել է աշխատակիցների կարգավիճակին, ինչի համար նրանք բանկերի կողմից աշխատավարձ են ստանում:

Ծրագրի՝ ինստիտուցիոնալ մակարդակի ազդեցություն կարելի համարել այն, որ, մի կողմից՝ հարստացավ բուհի նյութատեխնիկական բազան, մյուս կողմից, ըստ էության, իրական բովանդակություն ու կիրառություն ստացան արտաքին գործընկերների ու գործատուների հետ կնքած համագործակցության պայմանգրերում նշված գործողություններն ու պարտավորությունները: Ավելացնենք նաև, որ բուհում այժմ քննարկվում են կիրառական բնույթի ևս 1-2 մասնագիտությունների գծով նույնպես ԱՀՈՒ համակարգի մշակման ու ներդրման հարցերը:

**Ծրագրի մասնակիցներ**

| Երկիր | Հաստատություն |
|---|---|
| Հայաստան | Հայաստանում ֆրանսիական համալսարան – ծրագրի համակարգող |
| | Շիրակի պետական համալսարան |
| | Հայաստանի բանկերի միություն |
| | ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| Մոլդովա | Մոլդովայի առևտրային համալսարան |
| | Բալտիի Ալեսու Ռուսոյի անվան համալսարան |
| | Մոլդինկոմբանկ |
| | Մոլդովայի կրթության, գիտության և մշակույթի նախարարություն |
| Ֆրանսիա | Ժան Մուլեն Լիոն 3 համալսարան |
| | Ստրասբուրգի համալսարան |
| Ավստրիա | Կրեմսի կիրառական գիտությունների համալսարան |
| Բելգիա | Համալսարանական շարունակական կրթության եվրոպական ցանց |

Ասոցացված անդամներ. Մոլդովական բանկերի ասոցիացիա, Xarxa FP:

SMARTI

**ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ**

**(2020-2025թ.թ.)**

**Ծրագրի նպատակն է՝**

- Ուսումնասիրել անգլերենով ակադեմիական դասավանդման (EMI-English Medium Instruction) եվրոպական լավագույն փորձը և անգլերենով դասավանդող (EMI) աշխատակազմի կարողությունների զարգացումը:
- Եվրոպական գործընկեր համալսարանները մշակելու և վարելու են անգլերենով դասավանդող (EMI) աշխատակազմի մանկավարժական թրեյնինգների մոդուլներ՝ վերապատրաստվող ուսուցիչների, ուսանողների և աշխատակազմի համար Հայաստանում և Ռուսաստանում՝ օգտագործելով ECTS մոդուլային շրջանակը:
- Մշակվելու է EMI դասավանդման ուղեցույց՝ համալսարանների օգտագործման համար https://smarti-erasmus.eu/:

Այս նպատակի իրականացման համար նախատեսվում է անցկացնել մասնակից կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստումներ ՀՀ և արտասահմանյան գործընկեր համալսարաններում, ինչպես նաև անհրաժեշտ համակարգչային գույքի և սարքավորումների ձեռքբերում https://bit.ly/3CHhdHz:

**Ակնկալվող վերջնարդյունքներն են՝**

- «Անգլերենը որպես դասավանդման միջոց» (EMI) վերապատրաստման կենտրոնի և անգլերենի մակարդակի ստուգման թեստերի միասնական ցանցի, անգլերենը հատուկ նպատակների համար (ESP) վերապատրաստման, ՊԴ կազմի վերապատրաստման մոդուլների առկայություն,
- «Անգլերենը որպես դասավանդման միջոց» (EMI) ուսումնական ձեռնարկ,

- Առցանց հարթակ՝ ծրագրի վերջնարդյունքները տարածելու և ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով,
- EMI կենտրոնների ցանց,
- EMI անհատական ծրագրեր ՊԴ կազմերի և վերապատրաստողների ներբուհական վերապատրաստումների համար,
- EMI կիրառող դասախոսների վերապատրաստման ծրագիր,
- EMI հավատարմագրման և շարունակականության ծրագրի առկայություն և իրագործում:

**Ծրագրի մասնակիցներ**

| Երկիր | Հաստատություն |
|---|---|
| Հայաստան | **ՀՀ պետական կառավարման ակադեմիա (համակարգող Հայաստանում)** |
| | Շիրակի պետական համալսարան |
| | Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան |
| | Հայաստանի ազգային ագրարային համալսարան |
| | Գորիսի պետական համալսարան |
| | Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն |
| Գերմանիա | **Դրեզդենի տեխնոլոգիական համալսարան (ծրագրի համակարգող)** |
| Լատվիա | Ռիգայի տեխնիկական համալսարան |
| Միացյալ Թագավորություն | Լիվերպուլի Ջոն Մուրի համալսարան |
| Պորտուգալիա | Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանի կենսատեխնոլոգիայի ֆակուլտետ |

Ծրագրով նախատեսվում է նաև մասնակից բուհերում հիմնել EMI լեզվի կենտրոններ և կահավորել համապատասխան համակարգչային տեխնիկայով:

## 9.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

### ՎԱԼԼԱԴՈԼԻԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԻՍՊԱՆԻԱ, 2017-2019 ԹԹ., 2020-2023 ԹԹ.)

**Ծրագրի նպատակն է՝**

Գործընկեր բուհ հանդիսացող **Իսպանիայի Վալլադոլիդի համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների, պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմի ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ուսանողները (բակալավր, մագիստրոս, հետազոտող) հյուրընկալող համալսարանում կարող են ուսումնառությունը շարունակել մեկ կիսամյակ (5 ամիս), իսկ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմը՝ դասավանդել կամ մասնակցել վերապատրաստումների 5 օրով:

Հաշվետու ժամանակահատվածում Վալլադոլիդի համալսարանն հայտարարել էր ակադեմիական շարժունության մրցույթ, որի արդյունքում ՇՊՀ-ից մասնակցելու համար ընտրվել էին 1 ուսանող՝ («Թարգմանչական գործ՝ անգլերեն-հայերեն» մասնագիտություն) և Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի 2 դասախոսներ:

Բոլոր մասնակիցները վերադառնալուց հետո իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրին հաշվետվություն բուհի ղեկավարության, աշխատակիցների և ուսանողների մասնակցությամբ անցկացված աշխատաժողովի ընթացքում https://bit.ly/3Qu4BcK:

### ԳՐԱՆԱԴԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԻՍՊԱՆԻԱ, 2020-2023 ԹԹ.)

**Ծրագրի նպատակն է՝**

Գործընկեր բուհ հանդիսացող Իսպանիայի Գրանադայի համալսարանի և ՇՊՀ-ի ուսանողների, պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմի ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ուսանողները (բակալավր, մագիստրոս, հետազոտող) հյուրընկալող համալսարանում կարող են ուսումնառությունը շարունակել մեկ կիսամյակ (5 ամիս),

իսկ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմը՝ դասավանդել կամ մասնակցել վերապատրաստումների 5 օրով:

Հաշվետու ժամանակահատվածում Գրանադայի համալսարանն հայտարարել է ակադեմիական շարժունության մրցույթ, որի արդյունքում ՇՊՀ-ից մասնակցելու համար ընտրվել է 1 աշխատակից:

## ՅԱՍԻԻ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒ ՅՈՀԱՆ ԿՈՒԶԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՌՈՒՄԻՆԻԱ, 2021-2023ԹԹ.)

**Ծրագրի նպատակն է՝**

Գործընկեր բուհ հանդիսացող Ռումինիայի Յասիի համալսարանի և ՇՊՀ-ի ուսանողների ու աշխատակազմի ակադեմիական շարժունության կազմակերպումն ու անցկացումը:

Հաշվետու ժամանակահատվածում այս համալսարանն հայտարարեց ակադեմիական շարժունության մրցույթ, որին մասնակցեց նաև ՇՊՀ-ն: Մրցույթի արդյունքներով մեր համալսարանից ընտրվել է 1 աշխատակից և 1 ուսանող («Թարգմանչական գործ՝ անգլերեն-ռուսերեն» մասնագիտություն): Նրանց հաշվետվությունները լուսաբանող նյութերին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով https://bit.ly/3QLptwl:

## ԿԼՈՒԺ-ՆԱՊՈԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՌՈՒՄԻՆԻԱ, 2017-2021թթ.)

**Ծրագրի նպատակն է՝**

Գործընկեր բուհ հանդիսացող Ռումինիայի Կլուժ-Նապոկայի համալսարանի և ՇՊՀ-ի ուսանողների, պրոֆեսորադասախոսական ու վարչական աշխատակազմի ակադեմիական շարժունության կազմակերպումն ու անցկացումը:

Շարժունությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- ֆիզիկական գիտություններ (Physical Sciences),

- կենսաբանական և առընթեր գիտություններ (Biological and Related Sciences),
- լեզուներ (Languages),
- փիլիսոփայություն և էթիկա (Philosophy and Ethics),
- սոցիալական և վարքաբանական գիտություններ (Social and Behavioral Sciences),
- կառավարում և վարչարարություն (Management and Administration)։

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ն ընդունել է այս համալսարանից ժամանած չորս դասախոսների, որոնց հետ քննարկվել են մասնագիտական համագործակցության՝ մասնավորապես՝ մասնագիտական ոլորտում անգլերենի դասավանդման հարցերը։

## ՍՈՒՉԱՎԱՅԻ ՍՏԵՖԱՆ ՉԵԼ ՄԱՐԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՌՈՒՄԻՆԻԱ, 2021-2027ԹԹ.)

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ն Էրազմուս+ ակադեմիական շարժունության և փոխանակումների ծրագրի շրջանակներում կնքել է համագործակցության նոր պայմանագիր Սուչավայի Ստեֆան չել Մարեի համալսարանի հետ (Ռումինիա)։

**Ծրագրի նպատակն է՝**

Գործընկեր բուհ հանդիսացող Սուչավայի Ստեֆան չել Մարեի համալսարանի և ՇՊՀ-ի ուսանողների և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի ակադեմիական շարժունության կազմակերպումն ու անցկացումը։

2022թ. մայիսին ՇՊՀ-ի 2 աշխատակիցներ իրենց դասավանդման ու վերապատրաստման աշխատանքները հինգ օրով իրականացրին Սուչավայի Ստեֆան չել Մարեի համալսարանում։

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ն հյուրընկալել է Սուչավայի համալսարանի աշխարհագրության դասախոս Վասիլ Էֆրոսին, ով աշխատանքային հանդիպումներ, փորձի փոխանակում և քննարկումներ է ունեցել ՇՊՀ-ի ԱՀՀՀԿ Կենտրոնի աշխատակիցների, ինչպես նաև Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ՝

անդրադառնալով երկու բուհերի մասնագիտական ամբիոնների համագործակցության հեռանկարներին, առցանց դասընթացներ կազմակերպելու հարցերին https://bit.ly/3k1kkUh:

### ՆԵԱՊՈԼԻ ՖՐԻԴՐԻԽ 2-ՐԴԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԻՏԱԼԻԱ, 2021-2027ԹԹ.)

**Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ն Էրազմուս+ ակադեմիական շարժունության և փոխանակումների ծրագրի շրջանակներում կնքել է համագործակցության նոր պայմանագիր Նեապոլի Ֆրիդրիխ 2-րդի անվան համալսարանի հետ (Իտալիա):**

**Ծրագրի նպատակն է՝**

Գործընկեր բուհ հանդիսացող **Նեապոլի Ֆրիդրիխ 2-րդի անվան համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի ակադեմիական շարժունության կազմակերպումն ու անցկացումը:

## 9.3. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ն կնքել է նոր պայմանագրեր ու համաձայնագրեր՝ ընդլայնելով արտաքին համագործակցության շրջանակները և ընդգրկելով նաև ներքոհիշյալ բուհերն ու կազմակերպությունները: Մասնավորապես՝ համագործակցության պայմանագրեր ու հուշագրեր են կնքվել կամ վերակնքվել ԵՄ, ՌԴ և ՀՀ մի շարք համալսարանների և այլ կազմակերպությունների հետ: Դրանց մի մասը կնքվել է ավելի վաղ, սակայն հաշվետու ժամանակահատվածում դրանց վերջնաժամկետները չեն ավարտվել: Ներքոհիշյալ համալսարանների և այլ կազմակերպությունների մի մասի հետ էլ համագործակցությունն իրականացվում է Էրազմուս+ միջազգային դրամաշնորհային շարունակվող ծրագրերի շրջանակներում:

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

| № | ԲՈՒՀԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ |
|---|---|---|
| 1. | West University of Timisoara (Romania) | 2014-2021 |
| 2. | Jade University of Applied Sciences (Germany) | 2016-2021 |
| 3. | International University of Struga (Macedonia) | 2016-2021 |
| 4. | University College of Teacher Education (Austria) | 2017-2022 |
| 5. | Telavi State University after Iakob Gogegabashvili (Telavi, Georgia) | 2016-2021 |
| 6. | University of Pitesti (Romania) | 2017-2022 |
| 7. | Technical University of Cluj Napoca (Romania) | 2017-2021 |
| 8. | Technische Universitate Dresden (Germany) | 2017-2020, 2021-2024 |
| 9. | Universidade Catolica Portuguesa (Portugal) | 2017-2020, 2021-2024 |
| 10. | University of Valladolid (Spain) | 2017-2019, 2020-2023 |
| 11. | University of Granada (Spain) | 2020-2023 |
| 12. | Manipal University Jaipur (India) | 2020-2025 |
| 13. | Alexandru Ioan Cuza University of Iasi (Romania) | 2021-2023 |
| 14. | Riga Technical University (Latvia) | 2021-2024 |
| 15. | Liverpool John Moores University (Grate Britain) | 2021-2024 |
| 16. | Jean Moulin Lyon 3 University (France) | 2021-2024 |
| 17. | University of Strasbourg (France) | 2021-2024 |
| 18. | University of Applied Sciences Krems (Austria) | 2021-2024 |
| 19. | European University Continuing Education Network (Spain) | 2021-2024 |
| 20. | University of Naples Federico II (Napoli, Italy) | 2021-2027 |
| 21. | Stefan cel Mare University of Suceava (Romania) | 2021-2027 |

## ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

| № | ԲՈՒՀԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ |
|---|---|---|
| 1. | Липецкий государственный педагогический университет (Липецк, РФ) | 2016-2021 |
| 2. | Alecu Russo Balti State University (Moldova) | 2017-2022 |
| 3. | Academy of Public Administration (Moldova) | 2017-2022 |
| 4. | Государственный гуманитарно-технологический университет (РФ) | 2018-2023 |
| 5. | Российский Технологический Университет-МИРЭА (Москва) | 2019 |
| 6. | Тверской государственный университет, РФ | 2018-2028 |
| 7. | Витебский государственный университет, Беларусь | 2020 |
| 8. | Ogareva Mordovia State University (MRSU) | 2021-2024 |
| 9. | Irkutsk National Research Technical University (INRTU) | 2021-2024 |
| 10. | Kazan Federal University (KFU) | 2021-2024 |
| 11. | Petrozavodsk State University (PetrSU) | 2021-2024 |
| 12. | Чеченский государственный педагогический университет | 2021-2031 |
| 13. | Курский государственный университет | 2021-2031 |

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

| № | ԲՈՒՀԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ |
|---|---|---|
| 1. | Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան | 2019-2024 |
| 2. | Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան | 2020-2025 |
| 3. | ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ | 2020 |
| 4. | ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ | 2019 |
| 5. | Գորիսի պետական համալսարան | 2019-2029 |
| 6. | Գավառի պետական համալսարան | 2019-2029 |
| 7. | ՀՀ պետական կառավարման ակադեմիա | 2021-2024 |
| 8. | Հայաստանում ֆրանսիական համալսարան (UFAR) | 2021-2024 |

## ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| № | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ | ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ |
|---|---|---|
| 1. | «Դասավանդիր Հայաստան» | 2016-2026 |
| 2. | «Դեպի Հայք» հիմնադրամ | 2019 |
| 3. | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ | 2020 |
| 4. | Գյումրու սելեկցիոն կայան | 2020-2023 |
| 5. | «Բիոսոֆիա» ՀԿ | 2020-2023 |
| 6. | «Բասեն» համայնքի զարգացման հիմնադրամ | 2020-2023 |
| 7. | Գիտության և մշակույթի Գյումրու ռուսական կենտրոն | 2020-2026 |
| 8. | Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն-IFES | 2020-2022 |
| 9. | «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ | 2020-2025 |
| 10. | «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, ՀՀ | 2021 |

2021-2022 ուստարում որպես հայաստանյան գործընկեր այլ կազմակերպությունների հետ համագործակցություն, համալսարանի կողմից իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

➢ Համակարգվել են ՇՊՀ-ում կազմակերպված և անցկացված՝ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և մանկավարժների վերապատրաստման դասընթացները:

Մասնավորապես՝

- 2021թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացված դասընթացներին մասնակցել են 99 ուսուցիչներ https://bit.ly/3GwkGde, https://bit.ly/3GWwxCY:
- 2022թ. հուլիս-օգոստոս ամիսներին նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների հավակնորդների համար անցկացված դասընթացներն ունեցել են 11 մասնակիցներ, ովքեր ստացել են նաև համապատասխան վկայագրեր https://bit.ly/3QtTocb:
- 2022թ. օգոստոսին անցկացվել է ևս մեկ վերապատրաստում հանրակրթական ուսումնական հաստատությունների 175 ուսուցիչների համար: Նրանց նույնպես շնորհվել են համապատասխան վկայագրեր https://bit.ly/3X42m23:

Վերոնշյալ դասընթացներին շահառուների մասնակցությունը կատարվել է վճարովի հիմունքներով՝ ՇՊՀ-ին ապահովելով ֆինանսական լրացուցիչ մուտքերով: ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհով հաշվետու ուստարում իրականացվել է ոչ մշակութային նյութական ժառանգության պահպանմանը միտված «Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից» ծրագիրը: Եռամսյա ծրագրի ընթացքում կենտրոնի այցեր են կատարվել 20 գյուղական համայնք, պատրաստվել և ծրագրի էջերով տարածվել են 73 հրապարակում, 23 տեսանյութ, 2 տեսաֆիլմ, 5 ծավալուն մեդիաբովանդակություն, գյուղերում կազմակերպվել են 2 ավանդական-մշակութային միջոցառում: Ծրագրի ավարտին լույս է տեսել ուղեցույց-ձեռնարկ, մշակվել է 3 գիտական հոդված, որոնք տպագրվելու են ՇՊՀ-ի գիտական հոդվածների տեղեկագրում: Անցկացվել են սեմինարներ Աշոցքի, Ամասիայի և Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոցներում:

# 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## 10.1. ՇՊՀ-Ի ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՇՊՀ-ում որակի ապահովման ներքին համակարգն ունի ստորև ներկայացվող սխեմատիկ կառուցվածքը։

**ՇՊՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի կազմակերպական սխեմա**




Ամբիոնի որակի ապահովման գործընթացների համակարգման գործառույթները կատարում է ամբիոնի որակի ապահովման համակարգողը, ով մասնակցում է կենտրոնի կողմից կազմակերպված նիստերին, քննարկումներին, ապահովում տեղեկատվության փոխանցումը դասախոսներին և նրանց ներգրավվածությունը համալսարանի կառավարման և որակի ապահովման գործընթացներին՝ կատարելով որակի ապահովման գործընթացներին աջակցող այլ գործառույթներ:

Ֆակուլտետի որակի ապահովման համակարգողը մասնակցում է կենտրոնի կողմից կազմակերպված նիստերին, քննարկումներին, ապահովում տեղեկատվության փոխանցումը ուսանողներին և նրանց ներգրավվածությունը համալսարանի

կառավարման և որակի ապահովման գործընթացներին՝ կատարելով որակի ապահովման գործընթացներին աջակցող այլ գործառույթներ:

Հաշվետու ժամանակահատվածում բուհն իր բնականոն գործունեությանը զուգընթաց անցել է նաև հավատարմագրման գործընթաց: ՇՊՀ-ի հետագա զարգացման համար առավել քան կողմնորոշիչ է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցը»: Փորձագիտական զեկույցին համապատասխան մշակվել է «Թերությունների վերացման վերանայված ծրագիրը և ժամանակացույցը» (հաստատված ՇՊՀ-ի Ռեկտորի կողմից 25.11.2022թ.), որը հավանության է արժանացել փորձագիտական խմբի կողմից:

## 10.2 2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

1. Լրամշակվել և Գիտական խորհրդի 2022 թ.-ի մայիսի 24-ի նիստով հաստատվել է ՇՊՀ-ի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգը:
2. Պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ ֆակուլտետների և ամբիոնների որակի համակարգողների հետ (թվով 12), որոնք արձանագրվել և լուսաբանվել են:
3. Պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ (թվով 5) որակի աջակից-ուսանողների հետ:
4. Պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ ստորաբաժանումների ղեկավարների և ամբիոնների ՊԴ կազմի ներկայացուցիչների հետ:
5. ՊԴ կազմի վերապատրաստումների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն:
6. Շրջանավարտների կողմից բուհում ստացած կրթությունից, բուհի մասնագիտական և կազմակերպչական աշխատանքներից գոհունակության գնահատման հարցումների անցկացում և արդյունքների վերլուծություն:

7. Ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն:
8. Ուսանողների կողմից բուհում ստացած կրթությունից, բուհի մասնագիտական և կազմակերպչական աշխատանքներից գոհունակության գնահատման հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն:
9. ՇՊՀ-ի ուսանողների կողմից բուհի մասնագիտական և կազմակերպչական գործընթացներից ակնկալիքների գնահատման հարցումների անցկացում և վերլուծություն:
10. Դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման՝ 2020-2021 ուստարվա հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն:
11. ՇՊՀ-ի ՊԴ կազմի կողմից բուհի կառավարման համակարգի և վարչական կառույցների գնահատման հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն:
12. ՇՊՀ-ի հետազոտողի կրթական աստիճանում ուսումնառողների կողմից բուհում ստացած հետբուհական կրթության, մասնագիտական և կազմակերպչական վարկանիշների գնահատման հարցումների անցկացում և արդյունքների վերլուծություն:
13. ՇՊՀ-ի ՊԴ կազմի վարկանիշավորման տվյալների հավաքագրում, հենքի ստեղծում, վերլուծություն:
14. Մանկավարժական պրակտիկայի հարցումների վերլուծություն:
15. Գործատուների շրջանում հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն:
16. ՇՊՀ-ում ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգի բարելավում:
17. ՊԴ կազմի գիտական գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:

## 10.3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԴ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

| Հարցման տեսակը | Հարցման նպատակը | Հարցման պարբերականությունը |
|---|---|---|
| Ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատում: | Հարցման նպատակն է բացահայտել ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական գործունեության արդյունավետությունը և ուսանողների գոհունակությունը դրանցից՝ բարեփոխումներ իրականացնելու համար: | Յուրաքանչյուր կիսամյակ |

Հարցումներն անցկացվում են՝ ըստ ՇՊՀ-ի ՊԴ կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգի: Անցկացվում են յուրաքանչյուր կիսամյակ:

Գնահատումն իրականացվում է հետևյալ սանդղակով:

| | |
|---|---|
| Գերազանց կամ այո | 5 |
| Լավ կամ ավելի շուտ այո քան ոչ | 4 |
| Բավարար կամ ավելի շուտ ոչ քան այո | 3 |
| Վատ կամ ոչ | 2 |

Հարցումների արդյունքում իրականացվում է քանակական վերլուծություն՝ հետևյալ ձևաչափով՝

| | | | | | Մասնագիտական կոմպետենցիաներ | | | | | Մանկավարժական կոմպետենցիաներ | | | | | Կազմակերպչական կոմպետենցիաներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ամբիոն, դասախոսի անուն, ազգանուն | Մասնագիտություն, կուրս | Առարկա | Ուսանողների քանակ | Մասնակիցների քանակ | 1. Դասավանդող առարկայի տիրապետումը | 2. Առարկայական հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրումը | 3. Մասնագիտական խնդիրների լուծման կարողությունը | 4. Ուսանողների կողմից պահանջարկվածությունը | 5. Մասնագիտական հարցերում փորձառությունը | 1. Ուսուցման մատչելիություն, փոխկապակցվածություն, համակարգվածության սկզբունքները պահպանելը | 2. Դասընթացի նկատմամբ ուսանողների հետաքրքրությունների և պահանջմունքների խթանումն ապահովելը | 3. Կրթության, դաստիարակության, զարգացման կառուցակարգերին տիրապետելը | 4. Ուսանողի անձի հանդեպ ուշադրությունը, տրամադրվածությունը և հարգանքը | 5. Գնահատման օբյեկտիվություն, հիմնավորվածություն, թափանցիկության սկզբունքները պահպանելը | 1. Ուսումնական նյութի համապատասխանությունը ստուգման հարցաշարերին | 2. Լսարանային ժամանակի արդյունավետ կազմակերպումը | 3. Տեխնիկական միջոցների և դիդակտիկ նյութերի կիրառումը | 4. Առարկայի կրեդիտ-ժամերի բաշխվածության արդյունավետությունը (լսարանային և ինքնուրույն ժամաքանակի |

Յուրաքանչյուր դասախոսի համար ներկայացվում են միջինացված ցուցանիշներ: Նշենք, որ ամբիոններից ակնկալվում են որակական առավել խորքային վերլուծություններ, որոնք բացահայտելու են առկա խնդիրները:

2021-2022 ուստարվա երկու կիսամյակների հարցումների ընդհանուր տվյալներն ու ընդհանուր վերլուծություններն են.

| Ամբիոնը | Գնահատվող դասընթացների քանակը* | Լրացված հարցաթերթիկների քանակը |
|---|---|---|
| ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | |
| Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ | 178 | 750 |
| Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի | 226 | 1074 |
| Գործարարության և վարչարարության | 140 | 687 |
| ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | |
| Հայոց լեզվի և գրականության | 157 | 1045 |
| Ռուսաց լեզվի և գրականության | 86 | 528 |
| Անգլերեն լեզվի և գրականության | 168 | 1099 |
| Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության | 77 | 283 |
| Արվեստի | 93 | 233 |
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | |
| Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի | 163 | 1431 |
| Պատմության և փիլիսոփայության | 125 | 837 |
| Իրավագիտության և քաղաքագիտության | 56 | 284 |
| ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | |
| Մանկավարժության | 164 | 1002 |
| Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի | 97 | 657 |
| ՌԱԶՄԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ | | |
| | 91 | 586 |
| **Ընդամենը՝** | **1821** | **10496** |

* նույն դասընթացը տարբեր մասնագիտությամբ տարբեր կուրսերի համար հաշվարկված է առանձին-առանձին:

Ստորև ներկայացվում են հարցումների միջինացված ցուցանիշները յուրաքանչյուր ֆակուլտետի (ամբիոնի) համար:

| **Ֆակուլտետի (ամբիոնի) անվանում** | **Մասնագիտական կոմպետենցիաներ** | **Մանկավարժական կոմպետենցիաներ** | **Կազմակերպչական կոմպետենցիաներ** | **Ֆակուլտետի (ամբիոնի) միջին ցուցանիշը** |
|---|---|---|---|---|
| **Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ** | 4,74 | 4,70 | 4,84 | **4,76** |
| **Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ** | 4,71 | 4,69 | 4,83 | **4,74** |
| **Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ** | 4,61 | 4,57 | 4,75 | **4,64** |
| **Մանկավարժության ֆակուլտետ** | 4,64 | 4,61 | 4,76 | **4,67** |
| **Ռազմական ամբիոն** | 4,81 | 4,81 | 4,92 | **4,85** |

2021-2022 ուստարում կատարվել են նաև համալսարանից և ուսումնական գործընթացներից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներ, որոնց ամփոփ վերլուծության արդյունքում ստացվել են այսպիսի տվյալներ:

| **Հարցումների ամփոփ տվյալներ** | **Միջին ցուցանիշը** |
|---|---|
| Ընդհանուր գոհունակությունը վարչական մասի աշխատանքներից | 4,2 |
| Ընդհանուր գոհունակությունը ամբիոնի աշխատանքներից | 4,44 |

# 11. ՇՊՀ-Ի ՔՈԼԵՋ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

## 11.1. ՇՊՀ-Ի ՔՈԼԵՋ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջը (այսուհետ՝ Քոլեջ) տարեկան աշխատանքները պլանավորելիս առաջնորդվում է քոլեջի ռազմավարական ծրագրով, որտեղ հստակ ձևակերպված են առաքելությունն ու նպատակը:

2021-2022 հաշվետու ուստարում ընդունելություն է հայտարարվել Քոլեջում գործող 5 մասնագիտությունների համար՝ հիմնական կրթության հիմքով (առկա) և միջնակարգ կրթության հիմքով (հեռակա): Ուսանողների հավաքագրման աշխատանքները կազմակերպվել են տարբեր գործիքակազմերով.

- հայտարարություն սոցիալական ցանցերում,
- Գովազդի նկարահանում և հրապարակում,
- այցելություններ դպրոցներ:

Ընդունելության համար Քոլեջին ԿԳՄՍ նախարարությունից հատկացվել են ինչպես վճարովի, այնպես էլ անվճար տեղեր:

Ընդունելության արդյունքներն ըստ գործող մասնագիտությունների.

| № | ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ | ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԹԻՎԸ | ԱՆՎՃԱՐ | ՎՃԱՐՈՎԻ | ԱՌԿԱ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Նախադպրոցական կրթություն | 25 | 15 | 6 | *v* |
| 2. | Շուկայաբանություն | 25 | 7+1/արտռն./ | 17 | *v* |
| 3. | Զբոսաշրջություն | 25 | 6 | 19 | *v* |
| 4. | Սոցիալական աշխատանք | 25 | 12 | 9 | *v* |
| 5. | Գրադարանային գործ | 25 | 8 | - | *v* |

Հեռակա ուսուցման համակարգ ընդունվել են 11 ուսանողներ:

2021-2022 հաշվետու ուստարում Քոլեջն ունեցել է 272 ուսանող:

Ստորև ներկայացված են ընդունելության վերջին երեք տարիների արդյունքները.




## 11.2. ՇՊՀ-ի ավագ դպրոց

2021-2022 ուսումնական տարում դպրոցն իր աշխատանքները հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերով կազմակերպել է 9 դասարաններում (տե՛ս աղյուսակ 1) 193 աշակերտի համար:

Դպրոցի ուսուցչական համակազմում ընդգրկված են 38 մասնագետներ՝ միջինը շաբաթական 17,3 ժամ ծանրաբեռնվածությամբ (տե՛ս աղյուսակ 2): Ուսուցիչների 76%-ը մինչև 50 տարեկան են (տե՛ս աղյուսակ 3):

Հաշվետու ժամանակահատվածում ավագ դպրոցի ուսուցչական համակազմից ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցած թվով 2 ուսուցիչներ ցուցաբերել են բարձր պատրաստվածություն՝ գրանցելով գերազանց արդյունքներ:

Դպրոցի աշակերտները ակտիվ մասնակցություն ունեն մարզային, հանրապետական առարկայական օլիմպիադաներում և մարզական ու մշակույթի ոլորտներում:

Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ ուստարիների համար

| Դասարանների թիվը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի |
|---|---|---|---|
| 9-րդ դասարան | 1 | - | - |
| 10-րդ դասարան | 3 | 3 | 3 |
| 11-րդ դասարան | 4 | 3 | 3 |
| 12–րդ դասարան | 5 | 4 | 3 |
| **Ընդամենը** | **13** | **10** | **9** |

Աղյուսակ 2 . Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ

| Ցուցանիշը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի |
|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 43 | 39 | 38 |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 21,7 | 20 | 17,3 |

Աղյուսակ 3. Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը

| Ուսուցիչներ | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի |
|---|---|---|---|
| մինչև 30 տարեկան | 12 | 12 | 12 |
| 31-40 տարեկան | 7 | 7 | 7 |
| 41-50 տարեկան | 13 | 10 | 10 |
| 51-55 տարեկան | 6 | 6 | 6 |
| 56 տարեկան և ավելի | 5 | 4 | 3 |

# 12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «ՇՊՀ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

| | | (հազ. դրամ) | | |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ | | **2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված գումարը** | **Փաստացի** | Գերակատարում (+) Թերակատարում (-) |
| 1 | Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից | 531,500 | 470,655 | -60,845 |
| 2 | Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից | 415,577 | 447,940 | 32,363 |
| ***Բացվածք՝ավագ դպրոց - 58,958 հազ.դրամ, քոլեջ - 39,728 հազ.դրամ, համալսարան - 349,254 հազ.դրամ:*** | | | | |
| 3 | Դրամաշնորհային ծրագրերից, այդ թվում՝ | 18,030 | 27,784 | 9,754 |
| | Էրազմուս + SMARTI ծրագիր | 2,244 | 3,163 | 919 |
| | Գիտության կոմիտեի կողմից թեմատիկ | 15,786 | 22,622 | 6,836 |
| | Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից | | 1,999 | 1,999 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 9,650 | 11,277 | 1,627 |
| | Եկամուտներ լրացուցիչ դասընթացների կազմակերպումից | 1,650 | | -1,650 |
| | Եկամուտներ ընդունելության քննությունների կազմակերպումից և կրեդիտ պարտքերից | 4,000 | 3,649 | -351 |
| | Ուսուցիչների որակավորման դասընթացներից | 4,000 | 4,296 | 296 |
| | Այլ մուտքեր | | 3,332 | 3,332 |
| **Ընդամենը մուտքեր** | | 974,757 | **957,656** | -17,101 |
| **Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ** | | **2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված գումարը** | **Փաստացի** | **Գերածախս (+) Թերածախս (-)** |
| 1 | Աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված միջոցներ | 754,673 | 752,175 | -2,498 |
| *Բացվածք՝ ավագ դպրոց - 5,636 հազ.դրամ, քոլեջ - 5,438 հազ.դրամ, համալսարան - 741,101 հազ.դրամ:* | | | | |
| 2 | Աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված միջոցներ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, այդ թվում՝ | 16,430 | 17,870 | 1,440 |
| 2.1 | Աշխատավարձ Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում | 2,244 | 686 | -1,558 |
| 2.2 | Աշխատավարձ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող | 14,186 | 16,242 | 2,056 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | թեմատիկ ծրագրերի շրջանակներում | | | |
| 2.3 | Աշխատավարձ Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից ծրագրի շրջանակում | | 942 | 942 |
| 3 | Խրախուսում և դրամական աջակցություն | 55,700 | 54,992 | -708 |
| ***Բացվածք՝ ավագ դպրոց - 4,442 հազ.դրամ, քոլեջ - 4,080 հազ.դրամ, համալսարան - 46,470 հազ.դրամ:*** | | | | |
| 4 | Կրթաթոշակների վճարումներ | 26,622 | 23,159 | -3,463 |
| 5 | Վճարումներ պետական բյուջե | 14,100 | 6,263 | -7,837 |
| 6 | Կոմունալ վճարումներ, այդ թվում՝ | 25,824 | 29,406 | 3,582 |
| | Գազ | 18,000 | 17,056 | -944 |
| | ***Բացվածք՝ ավագ դպրոց - 3,055 հազ.դրամ, քոլեջ - 5,023 հազ.դրամ, համալսարան - 8,978 հազ.դրամ:*** | | | |
| | Էլեկտրաէներգիա | 5,790 | 8,944 | 3,154 |
| | ***Բացվածք՝ ավագ դպրոց - 805 հազ.դրամ, քոլեջ - 1,252 հազ.դրամ, համալսարան - 6,887 հազ.դրամ:*** | | | |
| | Ջրամատակարարում և ջրահեռացում | 900 | 1,909 | 1,009 |
| | ***Բացվածք՝ ավագ դպրոց - 179 հազ.դրամ, քոլեջ - 356 հազ.դրամ, համալսարան - 1,374 հազ.դրամ:*** | | | |
| | Կոմունալ այլ վճարներ | 1,134 | 1,497 | 363 |
| 7 | Փոստի և հեռահաղորդակցության ծառայությունների վճարներ | 1,500 | 1,599 | 99 |
| 8 | Գրասենյակային ծախսեր | 5,500 | 3,250 | -2,250 |
| 9 | Տպագրական ծախսեր | 4,650 | 2,852 | -1,798 |
| 10 | Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր | 7,800 | 2,748 | -5,052 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | Տրանսպորտային միջոցների սպասարկման և վառելիքի ծախսեր | 2,200 | 1,878 | -322 |
| 12 | Ծառայությունների ձեռքբերման ծախսեր, այդ թվում՝ | 28,961 | 33,348 | 4,387 |
| | Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա մատուցվող ծառայություններ | 17,481 | 21,871 | 4,390 |
| | Պահնորդային ծառայություններ | 2,820 | 2,585 | -235 |
| | Մանկավարժական և ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպում | 1,800 | 1,571 | -229 |
| | Աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ | 1,500 | 1,200 | -300 |
| | Գույքի նորոգում և սպասարկում | 1,500 | | -1,500 |
| | Ուսխորհրդի և երիտասարդական միջոցառումների ծախսեր | 1,550 | 109 | -1,441 |
| | Սարքերի և սարքավորումների ստուգման ծառայություններ | 660 | | -660 |
| | Վերապատրաստման դասընթացներ | | 1,396 | 1,396 |
| | Գնումների համակարգման ծառայություններ | | 1,213 | 1,213 |
| | Այլ ծառայություններ | 1,650 | 3,403 | 1,753 |
| 13 | Ներկայացուցչական ծախսեր | 1,500 | 572 | -928 |
| 14 | Անդամավճարների ծախսեր | 300 | 370 | 70 |
| 15 | Վարձակալության ծախսեր | 350 | | -350 |
| 16 | Գործուղման ծախսեր | 4,250 | 5,563 | 1,313 |
| 17 | Գրադարանային ծախսեր | 1,500 | 1,143 | -357 |
| 18 | Այլ ծախսեր, այդ թվում՝ | 17,770 | 18,836 | 1,066 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գիտական ծրագրերի իրականացման ծախսեր (ՇՊՀ-ի կողմից տրամադրվող դրամաշնորհներ) | 8,820 | 5,867 | -2,953 |
| | ABioNet ծրագրի շրջանակներում չօգտագործված գումարի վերադարձ | | 4,869 | 4,869 |
| | Ավագ դպրոցի դասագրքերի արժեք | | 1,273 | 1,273 |
| | Հավատարմագրման ծախսեր | 6,500 | 4,084 | -2,416 |
| | Վերոնշյալ հոդվածներում չներառված ծախսեր | 2,450 | 2,743 | 293 |
| 19 | Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում, այդ թվում՝ | 2,650 | 1,138 | -1,512 |
| | Համակարգչային գույք | 1,100 | 188 | -912 |
| | Էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական և կենցաղային սարքավորումներ | 800 | 454 | -346 |
| | Վերոնշյալ հոդվածներում չնշված ոչ ընթացիկ ակտիվներ | 750 | 496 | -254 |
| 20 | Ընթացիկ նորոգման ծախսեր | 2,200 | 2,907 | 707 |
| **Ընդամենը ելքեր՝** | | **974,480** | **960,069** | **-14,411** |

Գլխավոր հաշվապահ՝ Ռաֆֆի Քալաջյան

Գլխավոր ֆինանսիստ՝ Գոհարիկ Պետրոսյան